

# Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Крѣтѳіан» (образование) еженедельник 27.02.2019թ. չորեքշաբթի թիվ 7-8 (876-877)

## Նա ամենքին է, ու ամենքն իր մեջ էն

### Ղողանջ ավետիսի



Հազար ութ հարյուր վաթսուներկու թվին Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տվին. Հայոց արտերուն ի՞նչ բերք էր հասել,- Դժվար է ասել:

Սակայն այդ թվին Մայր Հայաստանի Արգանդը եղավ սրբորեն բեղուն: Մի մանուկ ծնվեց Լուսինա Դսեղուն... Նա հետո պիտի դառնա պատանի, եվ երիտասարդ, և այդ իմաստուն, Անբախտ Մարոյին լացով սպանի, Մեր հառաչանքը հասցնի Աստծուն: Մոմուռից դաղված նրա բերանով Մարոյի մանը պիտի ողբ ասի, Մարա գործի հետ Դավիթը խոսի, Գիբորը կանչի. «Եստի՛ համեցեք...»: Նա պիտի երգի՝ ինչ է կամեցել իր մոխրակալած-իրակեզ հոգին եվ՝ որքան տրտում - նույնքան կենսագին՝ Տարիներ հետո նա պիտի դառնա Մի ժողովրդի ազնիվ կենսագիր... Միևնույն թվին, Լուսինա շատ հեռու՝ Անատոլիոսի խավար խորքերում Մեկ ուրիշ մանուկ լույս աշխարհ եկավ: Մինչ հայրը նրա՝ Գևորգ կոչակար, Գոգնոցը հանեց, արխալուղ հագավ, Հարևան-դրկից՝ մի-մի շիշ օղով՝ Նրա տուն մտան՝ աչքալուսանքի: Հետո հերթն եկավ կանանց հոսանքի. Մի թաս խավիժով կամ ծվածեղով՝ Ծննդկանի շուրջ նստեցին նրանք՝ Որդուն մաղթելով արևշատություն, Նորատի մորը՝ շուտ ապաշխարանք, Աղվորիկ մի հարս, Բարի տատություն...

շարունակությունը՝ էջ 2

### Նա մեծ էր ավելի, քան եղավ

❖ Հեղեղի պես իջավ նա առասպելական Լուսին վայրենի լեռներից՝ բերելով իր հետ մի ամբողջ բնություն՝ հուռթի ու բազմատարր, մի ամբողջ հինավուրց ժողովուրդ՝ իր տոհմիկ երգերով ու խոսքով, հույզերով ու երևակայությամբ: Եվ ինչպես ստեղծող բնությունը՝ փռեց նա մեր հոգու առջև իսկական, անկեղծ բանաստեղծությունը:

❖ Հովհաննես Թումանյանը ամենահայկական, ամենաազգային գրողն է, խտացումը հայ ժողովրդի աշխարհայացքի, աշխարհագրացման. նրան կարդում են Հայաստանում ծերերն ու մանուկները, մեծերն ու դպրոցականները: Օտար երկրներում հայ մարդը երկյուղածությամբ կարդում է նրան՝ հաղորդվելու համար հեռավոր, քաղցր հայրենիքի հետ, ...հայրենիքի կարոտն առնելու:

❖ Նրա կախարդական գրիչը ուր որ դիպավ, կատարվեց իսկական արվեստի հրաշքը՝ լինի առակ թե քառյակ, հեքիաթ թե պատմվածք, հովվերգություն թե վիպագրություն:

... Նա եղավ մեզ համար այն, ինչ որ եղավ Պուշկինը ռուսների համար, Միցկևիչը լեհերի համար:

#### Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

❖ Թումանյանը ժողովրդական հանճարի փայլատակում է: Ծնվելով հողից, ունենալով լեռնցու մեծ սիրտ ու պայծառ երևակայություն՝ նա իր ստեղծագործության մեջ խտացրեց իր ժողովրդի ազգային նկարագիրը, նրա ճակատագիրն ու պատմական գոյատևման վիթխարի ուժը: Նա ի տես աշխարհի բարձրագույն մեր ժողովրդի համամարդկային ոգին, բարի սիրտը, անմար, հեթանոս հավատը բնության նկատմամբ:

❖ Հմայիչ էր Հովհաննես Թումանյանը որպես բանաստեղծ ու մարդ: Նա իր մեջ կրում էր ժողովրդի լավագույն գծերը-գրականության մեջ սեր դեպի ժողովրդական ստեղծագործությունը, իսկ կյանքում լայն հյուրասիրություն և սեր դեպի իր ընտանիքն ու երեխաները:

...Այժմ, նոր կյանքի կերտման այս դարաշրջանում, անցյալի ֆոնի վրա մեծ բանաստեղծի կերպարանքն ավելի ու ավելի է ցայտուն ելնում որպես փայլող գագաթ:

#### Մարտիրոս ՍԱՐՅԱՆ

շարունակությունը՝ էջ 3

### Համահայկական հորելյան

#### «Տիեզերքի տերն եմ ես...»

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը տիկնոջ՝ ԱՆՆԱ Հակոբյանի եւ դստեր հետ, Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի 150-ամյակի առթիվ այցելել է բանաստեղծի ծննդավայր՝ Դսեղ:



Վարչապետ Փաշինյանը ծաղիկներ է դրել հայ մեծագույն բանաստեղծի կիսանդրու առաջ եւ շրջայց կատարել տուն-թանգարանի տարածքում, ծանոթացել գրողի կյանքն ու գործունեությունը ներկայացնող մոտ 300 մեծարժեք ցուցանմուշին:

Նիկոլ Փաշինյանը հանդես է եկել ելույթով, որում, մասնավորապես, նշել է. «Կա Մեծարե՛ց, կա Տերյան եւ բազում այլ պոետներ կան, բայց Թումանյանն է անհաս Արարատը՝ մեր նոր քերթություն: Այս տողերի հեղինակը եղիշե Չարենցն է եղել: Հաճախ չի պատահում, որ պոետը պոետի մասին գովասանքի խոսքեր ասի, բայց սա գովասանքի խոսք չէ, սա խոնարհումի խոսք է եւ վկայությունն է այն բանի, որ մեր ունեցած Արարատը մեկը չէ: Շատերը մտածում են, որ Արարատն Արաքսի այն կողմնում է, բայց ինչպես տեսնում եք, ինչպես Չարենցն է վկայում, Արաքսի այս կողմում էլ ունենք Արարատ եւ այդ Արարատը Հովհաննես Թումանյանն է, եւ այդ Արարատը Լուսինա մարգում է, եւ այդ Արարատը Դսեղում է»:

շարունակությունը՝ էջ 2

#### Այս համարում

● 2018-2019 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական, պետական ավարտական եւ կենտրոնացված պետական ավարտական քննությունների կազմակերպման եւ անցկացման աշխատակարգը եւ ժամանակացույցը

տե՛ս՝ էջ 15-17

**Նա մեծ էր հողով, արյունով: -Արմատներ ուներ նա հողում:  
Իր երգերը գեղջուկ նահրցու քրտինքով էր նա ողորում:  
Հանճարեղ երգերում նրա - իր երկրի արեւն է շողում:-  
Նա մեծ էր հողով, արյունով: -Արմատներ ուներ նա հողում:**

Եղիշե ՉԱՐԵՆՑ

Ղողանջ ավետիսի



սկիզբը՝ էջ 1

Երևի այդօր - Եթե ոչ մարդկանց, Գեթ ամենալուր և ամենագոր բնության համար - Տոն էր անսովոր. Չէ որ նա գիտեր, թե ում է ծնել, Լուսն էր չէ որ, Թե ինչ նվազներ և ինչ անհամար, Ինչ հայաշխարհիկ երգեր են հնչում Այդ երկու թխիկ նորածինների Դեռ ոչինչ չասող առաջին ճիշում...

Երևի այդօր ցերեկը ձգվեց՝ Բնից նոր գարթնած կտրիճի մնան, Իսկ սովորները՝ Դարված սպասող շնիկների պես պոչերը քաշած՝ Լուռ կծկվեցին... Երևի անեղ ջրվեժներն այդօր Դոսեցին անծայն, ինչպես նկարում, Եվ լուսը երգեց, Բարը պար եկավ...

Անատուլուի ավազուտներում երևի այդօր Մարդիկ - քնի մեջ - ըմպեցին զովը Լուսնա ծորերի, Զահել այրու պես ծարավ արտերը և այգին պապակ Դագուրդ ստացան կրքոտ Դեբեդի ջրից անապակ... Իսկ Լուսնա ծորում թուն մտած մարդկանց Երազ այցելեց, Մի հրաշալից-անսովոր երազ. Դարավից չված հագարան մի հավք, Սոխակի ձայնով-ուժով անգրդի, Աբլորների հետ լուսայգ շեփորեց կտուրներն ի վար, Դետո դարավոր կաղնու փչակը կտցով քշփորեց Եվ - մե՛կ էլ հանկարծ - Իր կտցի վրա այնտեղից հանեց Շողեր ծալծրված, Շողեր դարսիդարս՝ Օծունի վանքի Շարակնոցի պես: Մինչ այդ շողերը, ծալ-ծալ բացվելով, Դենց այն է պիտի - ծլընգ հա՛ ծլընգ - զնգային կարմիր, Դագարան հավքը հրթռվեց-զնաց՝ Վերև սուրացող ասուպի նման, Եվ... թառե՛ց արդյոք Լուսաստղի վրա, Թե՛ ինքը դարձավ Լուսաստղը մի նոր...

...Երևի այդօր - քանի՛ դար հետո - Երկինք ու երկիր հաշտվեցին նորից... ...Երևի այդօր - քանի՛ դար հետո - «Դայաստան» բառից պոկվեցին - ընկան «Ռուսա»-ն ու «Տաճկա»-ն...

Պարույր ՍԵՎԱԿ «Անլռելի գանգակատուն» պոեմի սկզբնական հատվածը



«Տիեզերքի տերն են ես...»

սկիզբը՝ էջ 1

«Սրանով թունանյան պոեզի եւ հանճարի մասին, ըստ էության, ամեն ինչ ասված է եւ ես չեմ ուզում խոսել թունանյան մտավորականի, թունանյան հանճարի, թունանյան պետական գործչի մասին պետականության բացակայության պայմաններում, շարունակել է Վարչապետը: Ես ուզում եմ խոսել թունանյան մարդու մասին, ոչ թե թունանյան մարդու՝ որպես ընկեր, որպես ընտանիքի անդամ, որպես հայր, այլ որպես առանձին վերջրած մարդ, որովհետեւ թունանյանի կերպարն այսօրվա Դայաստանում պետք է առաջնորդի բոլորին, որովհետեւ մենք տեսնում ենք ահա սրբապատկեր դարձած այս նկարը, երեխաներն իրենց դասագրքերում տեսնում են սրբապատկերի արժեք ստացած թունանյանին, բայց ո՞վ էր այդ մարդը եւ ինչպե՞ս դարձավ Արարատը մեր նոր քերթության, ինչպե՞ս դարձավ Արարատ: Նա գյուղացի մի պատանի էր, մի երիտասարդ, միջին, նույնիսկ կարելի է ասել աղքատ մի ընտանիքից, նա մի մարդ էր, որ ամբողջ կյանքում չի ունեցել բարեկեցության որեւէ ժամկետ:

Թունանյանին մենք այսօր պատկերացնում ենք որպես Արարատ, որպես անհաս մի բարձրություն, բայց նա մի մարդ էր, ով իր ծնված առաջին օրից կրել է մարդկային բոլոր տառապանքները՝ աղքատություն, սով, անփողություն, ապրելու անհնարինություն, ու կյանքն ամեն վայրկյան փորձել է կտորել նրան, փորձել է սպանել նրան եւ ցածրացնել կենցաղի մեջ, ռուբլու մեջ, կոպեկի մեջ, մի կտոր հացի մեջ:

Եվ ի՞նչ է արել թունանյանը, ինչպե՞ս է հասել դրան: Միայն մի բանով, միայն ինքն իրեն հավատալով, միայն կրթության հետեւելով: Նույնիսկ կրթություն ստանալու հնարավորություն չի ունեցել, կիսատ է թողել կրթությունը եւ զնացել աշխատելու, չարքաշ աշխատանքով է ապրել, չարքաշ կյանքով է ապրել: Դի ունեցել ոչ մի օգնություն, հակառակը, ուրիշներն են իրենից օգնություն հայցել, եւ նույնիսկ շատ դեպքերում դեղորայք են եղել նրան, ասել են՝ չի օգնում մեզ, մտածելով՝ թունանյանը, որ թունանյան է՝ աշխարհի բոլոր-բոլոր հնարավորությունները նրա ձեռքում են:

Եվ ահա այս ամենը ծանրացել էր մարդու ուսերին, եւ ինչո՞ւ նա չի կտորվել, որովհետեւ նա հավատացել է իր ուժին: Այն ժամանակ, որ թվում է՝ պետք է ծնկեր, ինչպես Դիտուս Բրիտոսն անդամալուծված ասել է՝ վեր կաց եւ քայլիր, թունանյանն ինքն իրեն ասել է՝ վեր կաց եւ քայլիր, եւ նա վեր է կացել եւ քայլել: Նա քայլել է այնտեղ, որտեղ չկար ծանապարհ, նա ապրել է այնտեղ, որտեղ չկար հաց, նա հաղթել է այնտեղ, որտեղ չկար



հնարավորություն, որովհետեւ նա ասելիք է ունեցել իր ժողովրդին, եւ իր ժողովրդին իր ասելիքը եղել է մեկը՝ վեր կաց եւ քայլիր, մի՛ ծնկիր, մի՛ խեղճացիր, մի՛ նվաստացիր, մի՛ չարացիր, մի՛ կասկածիր դու քեզ, քո ուժին, քո հայրենիքին, քո անցյալին եւ ապագային, վեր կաց եւ քայլիր:

Սա է թունանյանի ուղերձը ժողովրդին, Դայաստանին, պետությանը, եւ ես այսօր ինձ իրավունք եմ վերապահում՝ որպես Դայաստանի Դանրապետության վարչապետ, որպես ժողովրդի ազատ կանքով ընտրված վարչապետ, թունանյանի անունից ասել հայ ժողովրդին՝ վեր կաց եւ քայլիր, դու անդամալուծված չես, դու պարտվող չես, դու մուրացիկ չես, վեր կաց եւ քայլիր, վեր կաց եւ քայլիր:

Թունանյանն ասում էր՝ ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած: Եկել է այդ հանուր կյանքի արշալույսը, այսօրվա Դայաստանն է այդ հանուր կյանքի արշալույսը, դուք եք բերել այդ հանուր կյանքի արշալույսը, դուք պարտավոր եք տեր կանգնել ձեր բերած արշալույսին, ձեր բերած երկրին, ձեր հաղթանակին, ձեր հայրենիքին: Եվ ուրեմն՝ վեր կաց եւ քայլիր: Վեր կացեք եւ քայլեք, վեր կացեք եւ հաղթեք եւ չխեղճանաք, երբեք ու երբեք չխեղճանաք, որովհետեւ դուք թունանյանի սե-

րունդն եք, դուք թունանյանի ժողովրդն եք, դուք թունանյանի հայրենիքն եք, եւ դուք թունանյանի գիտակցությունն եք եւ ապագան: Եվ ուրեմն՝ կեցցե՛ ազատությունը, կեցցե՛ Դայաստանի Դանրապետությունը, կեցցե՛ք մենք եւ մեր երեխաները, որ ապրում են եւ ապրելու են ազատ եւ երջանիկ թունանյանի Դայաստանում, թունանյանի երազած Դայաստանում:

Եվ վերջում՝ ուզում եմ արտասանել թունանյանի՝ իմ ամենասիրելի քառատողը, ու ես նոր էքսկուրսիայի ժամանակ էլ ասացի, որ շատ հետաքրքիր է՝ կա՞ արդյոք գիտական բնորոշում, թե ինչի մասին է նա գրել: Ես համոզված եմ՝ այստեղ ինչ-որ ուղերձ կա, եւ ինձ թվում է, որ այս ուղերձն ուղղված է բոլորիս, ուղղված է մարդուն, քաղաքացուն, հային, ով կարող է կարդալ այս տողերը: Որպես այսօրվա խորհրդանիշ՝ թանգարանի մատյանում հենց այս քառատողը գրառեցի.

«Դոգիս՝ տանը հաստատվել, Տիեզերքն է ողջ պատել. Տիեզերքի տերն են ես, Ո՞վ է արդյոք նկատել»: Դուք տիեզերքի տերն եք, ժողովուրդ, տեր կանգնեք ձեր տիեզերքին: Ծնորհավոր թունանյանի 150-ամյակը»:

Դովհաննես թունանյանի՝ Լուռու մարզի Դսեղ գյուղում գտնվող տուն-թանգարանն Ամենայն հայոց բանաստեղծի հայրական տունն է, որը թանգարանի է վերածվել 1939 թվականին՝ գրողի ծննդյան 70-ամյակի առթիվ: Բակում տեղադրված է գրողի կիսանդրին, եւ կառուցված է մատուռ (1994), որտեղ ամփոփված է բանաստեղծի սիրտը: Թանգարանը երկհարկանի է՝ բաղկացած 6 սենյակից: Առաջին հարկում են գտնվում հացատունը, մեծ օթախը եւ 2 ցուցասրահ: Ցուցասրահներում ներկայացված ցուցանմուշները պատմում են թունանյանի տոհմաբանության, ծնողների, Թիֆլիսում եւ Զալալալիում ուսումնառության տարիների, գրական-հասարակական գործունեության մասին: Երկրորդ հարկում գտնվող 2 սրահում ցուցադրված են բանաստեղծի մահճակալը, գրասեղանը, հագուստը եւ անձնական իրերը:



Թումանյան - 150

«Թումանյանական աշխարհը»

Ցուցահանդես ՀՀ Ազգային ժողովի շենքում

Ազգային ժողովում, Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը, տեղի է ունեցել Արմեն Լոռենցի աշխատանքների ցուցահանդեսի բացումը՝ նվիրված հայ մեծ բանաստեղծի ծննդյան 150-ամյակին: Բացմանը ներկա են եղել ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանը, «Լուսավոր Հայաստան» խմբակցության ղեկավար Էդուն Մարությանը, պատգամավորներ, ԱԺ աշխատակազմի ներկայացուցիչներ, լրագրողներ: Միջոցառմանը մասնակցել են նաև Երեւանի Հովհաննես Թումանյանի անվան հ. 32 դպրոցի սաները եւ ուսուցիչները:

Շնորհավորելով ներկաներին՝ բանաստեղծի 150-ամյակի առթիվ՝ ՀՀ ԱԺ նախագահը նշել է. «Թումանյանի կենսագրությունը լավագույն օրինակներից է, թե ինչպես կարող է անհատն իր կյանքով ու գործունեությամբ անմնացորդ նվիրվել սեփական ժողովրդին, հայրենիքին եւ իր ստեղծագործություններով ազդել մի ամբողջ ժողովրդի աշխարհայացքի ձեւավորման վրա»: Ըստ Արարատ Միրզոյանի՝ Թումանյանն արդարացիորեն կրում է «Ամենայն հայոց բանաստեղծ» տիտղոսը, իր ստեղծագործություններում ամփոփում հայ ժողովրդի իմաստունությունը, հույզերը, ցավերը եւ անսպառ հավատը պայծառ ապագայի նկատմամբ: Օրենսդիր մարմնի ղեկավարը հատկանշական է համարել այն, որ Թումանյանի 150-ամյակի առթիվ Ազգային ժողովում բացվել է լուսնի նկարչի վրձնած աշխատանքների ցուցահանդեսը:



Նախածեռնության հեղինակ Էդուն Մարությանը կարեւորել է խորհրդարանում Արմեն Լոռենցի «Թումանյանական աշխարհը» խորագիրը կրող ցուցահանդեսի բացումը: Բանաստեղծի ստեղծագործություններն ուղեկցում են մեզ մակուց, նշել է պատգամավորը՝ հավելելով, որ այն ազգերը, որոնք չունեն մեծեր, չեն կարող ունենալ նաև ապագա:

Արմեն Լոռենցը շնորհակալություն է հայտնել հյուրընկալության համար եւ գիրք նվիրելու օրվա առթիվ իր հեղինակած գիրքը նվիրել ՀՀ ԱԺ նախագահին ու խմբակցությունների ղեկավարներին: Այնուհետև խորհրդարանի ղեկավարը հյուրընկալել է Երեւանի Հովհաննես Թումանյանի անվան հ. 32 դպրոցի սաներին: Արարատ Միրզոյանը ներկայացրել է Ազգային ժողովի գործունեությունը, պատասխանել հետաքրքրող հարցերին եւ գիրք նվիրելու տոնի կապակցությամբ դպրոցի գրադարանին փոխանցել Լեւոն Խեչոյանի հեղինակած գիրքը:

Նա մեծ էր ավելի, քան եղավ

սկիզբը՝ էջ 2

❖ Հովհաննես Թումանյանը ստեղծել է իր սեփական երկերը մեր պոեզիայի մեջ: Նա արդեն վարպետ է ամեն կողմից, մեծ գեղարվեստագետ և ժողովրդական հոգու իմաստուն ու վսեմ թարգման: Նա կանգնած է իր հստակ ճանապարհի վրա, որ լի է գեղարվեստական հրաշալիքներով:

Վահան ՏերՅԱՆ

❖ Ես չեմ կասկածում, որ հայ բանաստեղծության կաճառի ամենաբարձր դեմքը Հովհաննեսն է, որ այնպես լավ ճանաչում էր հայ գյուղը, իր գեղեցիկ քնարի մեջ նոր հնչյուններ կգտներ երգելու համար այն բոլոր նորը, որ առաջ է եկել... հայ աշխատավորության կյանքում:

Հովհաննես ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

❖ Հովհաննես Թումանյանը մեկն էր այն երջանիկներից, որոնց հոգեկան հմայքը, տաղանդի պարզությունը այնքան էր զորավոր, որ ճեղքում էր ամեն մի արգելք ու պատնեշ, հասնում էր ուրիշ սրտերի խորքը, դառնում էր հանուր ու մարդկային:

Եղիշե ՀԱՐԵՆՅԱՆ

❖ Թումանյանը հենց նա է, ում հետ ենք մենք ամենքս՝ կամա թե ակամա, գիտությամբ թե անգիտությամբ: Հետո ենք ամբողջ կյանքներումս՝ տակալին գրածանաչ չդարձած և մինչև մահվան մահից: Հետո ենք առավել, քան որևէ մեկ այլ գրողի:

❖ Թումանյանը մեր այն միակ բանաստեղծն է, որ գրել է համարյա թե գրական բոլոր ժանրերով ու տեսակներով, ըստ որում ոչ թե սոսկ գրելու փաստով, այլ այն իրողությամբ, որ ամենուրեք հանդես է եկել իբրև դասական, իբրև օրինակելի, իբրև չափանիշ:

❖ Թումանյանի ճակատին էր գրված՝ լինել հայ ժողովրդի ետմիջնադարյան պատմության կենսագիրը:

Պարույր ՍԵՎԱԿ

❖ Հովհաննես Թումանյանը դարագուլիս է մեր գրական կուլտուրայի պատմության մեջ: Նա բարձրացնում է մեր կուլտուրայի արժեքը, բարձրացնում է նրա տեսակարար կշիռը: Նա պատկանում է իր ժողովրդին, որին ծառայեց նա իր գրչով ու խոսքով...

Դերենիկ ԴԵՄԻՐՅԱՆ

❖ Դսեղը երեք կողմից շրջապատված է վիթխարի, անդնդախոր ծորերով:

Ես լռում եմ, Հովհաննեսը պատմում է, պատմում է անվերջ, մի անմահ բաղդությամբ ու հիացմունքով:

...Այդ թույլին նա ինձ թվում էր մի տիտան, որին տված է ամենադժվար հյուսվածքներ կազմել լեռնային ամեն տեսակ հմայքներից, մի կախարհ, որին մնում է մի գրիչ առնել ձեռքը, և ահա ամեն ինչ-ամալ ու մշուշ, արև ու հեղեղ, երկինք ու ծաղիկ, գազան ու ջրվեժ այնպես կլինեն, ինչպես նա է ուզում: Եվ թվում էր, թե Լոռնոս հսկաներն ամեն կողմից-և Դվալը, և Լալվարը, և՛ ուրշ հարյուր ու մի գազաթներ այս միևնույնն էին ասում մռայլ ժպիտներ հագած...

ԼԵՈ

❖ Այո՛, Թումանյանն իր արվեստով սնան է կախարհի. բնավ չէք զգում, որ գրել է. թվում է երկը ժողովրդական մի կենդանի խոսք է իր ձևերով, երանգներով ու հույզերով. զգում եք, որ բանաստեղծը ելնում է իր ժողովրդի ընդերքից, իր մեջ մերժած, խտացրած այն ամենը, ինչ կոչվում է ժողովրդի կյանք՝ նրա մաքուր, ազնիվ հոգին, նրա մարդասեր աշխարհայացքը, նաև նրա տառապալից առօրյան, աղքատի ապրուստը... Մի խոսքով՝ Թումանյանի երկերում կա, ինչպես Տերյանն է նկատել, «հայրենի խիճը ու ժպիտ և հայրենի վիշտ»...

❖ ...Թումանյանը հայության կյանքի բազմակողմանի ընդգրկումով, նրա հուզական աշխարհի և ոգու նկարագիրներով, հարազատ, պարզ ու վսեմ արվեստով հանդիսանում է մեր ազգային մեծ երգիչը, մեր մեծ բանաստեղծը:

Ստեփան ՀՈՐՅԱՆ

շարունակությունը՝ էջ 4

Ծաղկեպսակ՝ բանաստեղծի հուշարձանին

Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակի կապակցությամբ Հյուսիսային համալսարանի դասախոսական եւ ուսանողական կազմը՝ ղեկավոր Բորիս Մակիչյանի գլխավորությամբ, Լոռվա ձոր հասարակական կազմակերպության նախագահ Սերգո Երիցյանի, գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնի մասնակցությամբ, ծաղկեպսակ դրեցին գրողի՝ Երեւանի Ազատության հրապարակում գտնվող հուշարձանին:

Ողջունելով մասնակիցներին՝ Բ. Մակիչյանը նշեց, որ դեռես 2009 թ. Հյուսիսային համալսարանում ստեղծված թումանյանական «Վերնատուն» գիտական (ներկայումս՝ գիտամշակութային) կենտրոնի գործունեությունն ուղղված է եղել Ամենայն հայոց բանաստեղծի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրությանը, նրա հոգեւոր ժառանգության տարածմանը: Իսկ Թումանյանի կյանքի յուրաքանչյուր հիշարժան դրվագ բուխում պարբերաբար նշվում է առանձնահատուկ շուքով: Ապա նա անդրադարձավ այն միջոցառումներին, որոնք նախածեռնել է բուհը՝ թումանյանական տարվա կապակցությամբ, հատկապես կարեւորելով «Թումանյան-150» հոբելյանական հատուկ հուշամեդալի թողարկումը (այն կտրվի թումանյանագիտության ոլորտում զգալի ներդրում ունեցող գործիչներին), «Հյուսիսային համալսարան» պաշտոնաթերթի «Թումանյան-150» հավելվածի տպագրումը, համալսարանի դասախոսների եւ ուսանողների պատվիրակության այցելությունը Թումանյանի ծննդավայր՝ Դսեղ:

Նշենք, որ գրողի ծննդյան օրը Դսեղում կազմակերպված թումանյանական միջոցառումների ընթացքում Հյուսիսային համալսարանի «Թումանյան-150» հուշամեդալով պարգևատրվեցին ՀՀ գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, բարեգործ Գագիկ Ծառուկյանը, ինչպես նաև Դսեղի եւ Երեւանի Թումանյանի տուն-թանգարանները: Իսկ Ազգային ժողովի պատգամավոր Վահե Էնֆիաջյանին, ինչպես նաև



Հյուսիսային համալսարանի գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի եւ հետազոտական մասնագիտական կրթության կենտրոնի ղեկավար Գրիգոր Ասատրյանին եւ համալսարանի լրատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար Գայանե Հակոբյանին հուշամեդալները հանձնվեցին հաջորդ օրը՝ Հյուսիսային համալսարանում կազմակերպված հոբելյանական միջոցառման ժամանակ:

Բազմաթիվ միջոցառումների շարքում ապրիլ ամսին բուհը նախածեռնում է կազմակերպել «Հ. Թումանյանի հոգեւոր ժառանգությունը եւ արդիականությունը» խորագրով միջազգային գիտաժողով:

«Թումանյան-150» հոբելյանական հուշամեդալներով Թբիլիսիում կազմակերպված հանդիսությունների ժամանակ պարգևատրվել են նաև հայ եւ վրացի մի խումբ մտավորականներ:

Պսակադրության արարողության ժամանակ «Լոռվա ձոր» ՀՀ նախագահ Սերգո Երիցյանը եւս անդրադարձավ Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված միջոցառումների իրենց ծրագրին՝ հատկապես կարեւորելով մեծ գրողի գրական ժառանգության հրատարակումը, նրա ստեղծագործությունների թեմաներով գեղակարների ցուցահանդեսի կազմակերպումը, ինչպես նաև մասնակցությունը Թբիլիսիում կազմակերպվող հանդիսություններին:

# Նա մեծ էր ավելի, քան եղավ

սկիզբը՝ էջ 2

❖ Հովհաննես Թումանյանի գրեթե բոլոր գրվածքները կարելի է այս կամ այն ձևով երաժշտության վերածել, այնքան տրամադրող ու հնչուն են դրանք: Մեր բանաստեղծներից և ոչ մեկը այնքան չի օգտագործվել կոմպոզիտորների կողմից, որքան Հովհաննես Թումանյանը:

### Արմեն ՏԻԳՐԱՆՅԱՆ

❖ Թումանյանի պոեմներից առաջացած հիացմունքից չեն կարողանում ազատվել. փափագում են ինչքան կարելի է շուտ սկսել Թմկաբերդի իշխանուհու մասին օպերան:

### Ալեքսանդր ՄՊԵՆԴԻԱՐՅԱՆ

❖ Հայաստանում չկա այնպիսի մարդ, լինի չափահաս կամ երեխա, որին ծանոթ չլինի նրա «Շունն ու կատուն» հիանալի երկը: Հայ ժողովրդի սիրելի բանաստեղծը՝ Թումանյանը, որ իր քաղցրահնչյուն չափածոների ու կլասիկ հստակություն ունեցող արձակի մեջ արտահայտել է ժողովրդի խոհերն ու զգացումները, այդ փոքր լեզունի մեջ էլ ցուցադրել է իր վիթխարի տաղանդի առանձնահատկությունները:

### Համո ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆ

❖ Ընթերցելով Թումանյանի երկերը՝ մեր ժողովուրդը նրանց մեջ գտավ իր սեփական հույզերի և մտքերի անենահարազատ վերարտադրումը: Նրա ստեղծագործության միջոցով ժողովուրդը ինքը ճանաչեց իրեն և սիրեց Թումանյանին անմահական սիրով:

### Վիկտոր ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

❖ Հովհաննես Թումանյանը այն կախարհն է, այն Այվազովսկին, որ վրձինը ձեռքին գրչու է տարերքին և հնազանդեցնում իրեն:

❖ Ուրիշ ժողովուրդների ընթերցողներին Թումանյանի պոեմները (օրինակ՝ «Անուշը») ավելի շատ բան են տալիս Հայաստանի և նրա կյանքի մասին, քան կարող են տալ հատուկ հետազոտությունների ստվար հատորները:

❖ Թումանյանի պոեզիան իր ամբողջության մեջ հենց ինքը Հայաստանն է, հնադարյան ու նոր, մեծ վարպետի հարություն առած ու տպավորված ոտանավորի մեջ:

### Վալերի ԲՐՅՈՒՄՎ

❖ Նրան, ով գրել է «Մի կաթիլ մեղր», «Շունն ու կատուն», «Մուկիկի մահը», իրոք որ չի կարելի համաշխարհային արվեստի առաջնակարգ վարպետների կարգը չդասել:

### Կոռնել ՉՈՒԿՈՎՍԿԻ

❖ Ի՞նչ երջանիկ է Հայաստանը, որ ծնել է այդպիսի իսկական հումանիստ: Ի՞նչ երջանիկ ժողովուրդ է, որ դաստիարակել է այդպիսի մեծ սիրտ: Ե՛վ սիրտ, և՛ կամք, և՛ միտք:

❖ Ինչպես բարձր են Հայաստանի լեռները, այնպես էլ բարձր է Հովհաննես Թումանյանի բարոյական դեմքը: Ինչպես խորն են Հայաստանի լճերը, այնպես էլ խորն են Թումանյանի մտքերը:

❖ Թո՛ղ ամբողջ աշխարհն իմանա, որ մենք անսահմանորեն հզոր ենք և հարուստ՝ կուլտուրայով: Թո՛ղ համաշխարհային պոեզիայի աստղերն իրենց հայացքը զգեն հայկական հանճարի ստեղծագործական ջրերի մեջ:

### Պավլո ՏԻՉԻՆԱ



# «Մեր բոլոր գործողությունները պետք է բխեն մեր նպատակներից՝ հասնելու առաջնահերթությունից»

Ռազմարդյունաբերական համալիր

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ կառավարությունում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովի նիստ:

Բացելով նիստը՝ վարչապետ Փաշինյանը նշել է. «Ռազմարդյունաբերության համալիրի զարգացումը մեր կառավարության կողմից հռչակված է որպես առաջնահերթություն, և մենք այստեղ պետք է կարողանանք շատ լուրջ փոփոխությունների և արդյունքների հասնել: Սրա համար անհրաժեշտ է, իհարկե, իրականացնել եւ կառուցվածքային փոփոխություններ, եւ գտնել հնարավորություններ, որպեսզի ոլորտի ֆինանսավորումն էական մեծանա:»

Ըստ էության՝ ռազմարդյունաբերական համալիրի զարգացման համար մեզ պետք է իրականացնել հետեւյալը. անհրաժեշտ է ունենալ մեր գիտական պոտենցիալի, մասնավոր ներդրումների և պետական կառավարման համակարգի շատ հստակ աշխատող մեխանիզմ, և առաջիկայում այս հարցը պետք է լինի մեր ուշադրության կենտրոնում: Իհարկե, մենք այս համատեքստում ենք դիտարկում նաեւ Հայաստանում բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության մասիարարության ստեղծումը, որը կարելի է, բայց ոչ բավարար պայման է, որպեսզի մենք կարողանանք ոլորտում լուրջ փոփոխությունների հասնել: Այստեղ շատ կարեւոր է մեր գիտական ներուժի հետ համագործակցության հարցը և նաեւ Պաշտպանության մասիարարության, Գլխավոր շտաբի վերլուծական աշխատանքը մեր Ձիմված ուժերի կարիքների համար, որովհետեւ շատ կարեւոր է, որ նույնիսկ այն միջոցները՝ դրանք շատ են, թե քիչ են, իհարկե, կարելի է, որ շատ լինեն, բայց շատ լինելու պարագայում նաեւ պետք է թիրախները ճիշտ որոշվեն, պետք է ճիշտ որոշվի, թե մենք ինչ կարգի մշակումների, հետազոտությունների, արտադրանքի, սպառազինության և տեխնիկայի կարիք ունենք, և դրանց որ մասի մշակումը, արտադրությունը և արդիականացումը կարող ենք իրականացնել Հայաստանի Հանրապետությունում:

Ընդհանուր առմամբ, իհարկե, այսօր մենք որոշակի կարողություններ ունենք Հայաստանի Հանրապետությունում, բայց այդ կարողությունների ծավալը, թողունակությունը և իրական արտադրանքի ծավալը չի կարող գոհացուցիչ եւ բավարար թվալ: Ընդհանրապես, կարծում եմ, որ նաեւ այս ոլորտում, մյուս ոլորտներում նույնպես խնդիրները քննարկելիս մենք պետք է քննարկենք ոչ թե բարդությունները, թե ինչքան բարդ է այս կամ այն խնդիրը լուծելը, այլ պետք է մեծապես մեր նպատակները, և մեր բոլոր գործողությունները պետք է բխեն այդ նպատակներից:



րին հասնելու առաջնահերթությունից: Այն աշխարհաքաղաքական, ռազմաքաղաքական միջավայրը, որ այսօր կա մեր տարածաշրջանում, մեզ թույլ չի տալիս «յուլա գնալու» տրամաբանությամբ ապրել, որովհետեւ «յուլա գնալու» տրամաբանությամբ մենք ընդամենը սպառում ենք այս ռեսուրսները, որոնք ունենք:

Մենք պետք է մտածենք մեր ռեսուրսների զարգացման մասին և այստեղ պետք է անողոր լինենք առաջին հերթին ինքներս մեր նկատմամբ: Մենք պետք է, այո, գնանք շատ լուրջ, թեկուզ ոչ պարտադրյալ, կամային լուծումների, որպեսզի համոզվենք, որ մեր պետական համակարգում ընդհանրապես պետական ֆինանսավորում ստացող որեւէ օղակ չկա, որը պարսպ նստած է: Պարսպ օղակները ծայրահեղ դաժանությամբ վերացնելը մեր անենակարելի խնդիրն է՝ անկախ նրանից, թե դա որ ոլորտին է վերաբերում, առավել եւս՝ ռազմարդյունաբերության, տեխնոլոգիաների ոլորտներին: Մենք այստեղ պետք է կարողանանք իսկապես տեխնոլոգիական լուծումներ առաջարկել: Տեխնոլոգիական լուծում ասելով եւս պատկերացնում են հետեւյալը՝ կարելի է, կոպիտ ասած, ոչ թե տանկն է, այլ այն խնդիրը, որը մենք ուզում ենք լուծել տանկի միջոցով: Հետեւաբար, տանկը չէ կարելի, այլ խնդիրը և դրա լուծումը: Մեր մտածելակերպը պետք է լինի՝ գտնել մի միջոց, որը կլուծի այդ խնդիրը՝ անկախ նրանից՝ դրա անունը տանկ է, թե որեւէ ուրիշ բան:

Հետեւաբար, մեր տրամաբանությունը ռազմարդյունաբերության, գիտության, տեխնոլոգիայի ոլորտներում այսպես պետք է աշխատի. մենք պետք է հասկանանք մեր խնդիրները, մեր լուծումները և դուրս գանք այդ լուծումների, գործիքների վերաբերյալ եղած ավանդական պատկերացումներից, որպեսզի կարողանանք տեխնոլոգիական որոշակի առաջընթաց և փոփոխություն առաջնորդել: Որպես անենավառ օրինակ՝ նամակի խնդիրը սովորաբար եղել է տեղեկատվությունը Ա կետից Բ կետը հասցնելը, բայց եթե մարդիկ ծրարի, թղթի և գրիչի տրամաբանությամբ կպած մնային, մինչեւ հիմա էլեկտրոնային փոստը չէին ստեղծի: Մեր խնդիրն ահա այդպիսի փոփոխություն անելն է»:

ՊՆ ռազմարդյունաբերության պետական կոմիտեի նախագահ Ավետիք Բերոյանը նշել է, որ ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի պատվիրակությունն այս տարի առաջին անգամ մասնակցել է Արաբական Սիացյալ Էմիրություններում 2 տարին մեկ անգամ կազմակերպվող ռազմական տեխնիկայի և սպառազինության IDEX համաշխարհային ցուցահանդեսին՝ առանձին տաղավարով: Նրա խոսքով՝ մեր տաղավարը մեծ հետաքրքրություն է առաջացրել, և Հայաստանի ցուցադրությունը գտնվել է ուշադրության կենտրոնում, ինչը պայմանավորված էր թե՛ հայկական կողմից ներկայացված ռազմական արտադրանքով, թե՛ ցուցահանդեսի բացման արարողությանը ՀՀ ՊՆ Պատվո պահակախմբի վաշտի, պաշտպանության ռազմական նվազախմբի և «Երեսնամյա թմբուկներ» խմբի ցուցադրական ելույթներով: Ա. Բերոյանը տեղեկացրել է, որ Միջին Արեւելքի ներդրողների շրջանում մեծ հետաքրքրություն կա հայկական ռազմական արտադրանքի նկատմամբ, ինչը լավ հիմք է ներդրումների ներգրավման և ՀՀ գիտատեխնոլոգիական արտադրանքի արտահանման շուկաները ընդլայնելու համար:

Այնուհետեւ նիստի ընթացքում քննարկվել են ռազմարդյունաբերության համալիրի զարգացման ուղղված ծրագրերը և անելիքները:

## Բարեգործական համերգաշար

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը և տիկին Աննա Հակոբյանն «Արամ Խաչատրյան» համերգասրահում ներկա են գտնվել Հայ կոմպոզիտորական արվեստի 10-րդ փառատոնի բացման արարողությանը, որի ընթացքում համերգով հանդես են եկել Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ, և ՀՀ ժողովրդական արտիստ, սոպրանո Հասմիկ Պապյանը:

Համերգի տոմսերից ստացված հասույթը կփոխանցվի «Արմենակ Ուրֆայան» բարեգործական հիմնադրամին:

Հայ կոմպոզիտորական արվեստի 10-րդ փառատոնը նվիրվում է Ավետ Տերտերյանի 90-ամյակին: Փառատոնը կանցկացվի մինչև մարտի 12-ը՝ ներկայացնելով հայ կոմպոզիտորական դպրոցի երախտավորների ստեղծագործությունները:



Քննարկում

Դասագրքերը կդառնան երկհատոր

«Մենք ունենք գրված կրթական չափորոշիչներ, որոնք, ըստ էության, վատը չեն: Երբեմն առանց չափորոշիչների պահանջներին հետևելու՝ գրվել են ծրագրեր, դասագրքեր, ինչի հետևանքով առաջացել են բազմաթիվ խնդիրներ: Մենք պետք է հասկանանք, թե ի վերջո կրթական գործընթացի արդյունքում ինչպիսի աշակերտ ենք ուզում ունենալ: Այս մասին բազմիցս ասել են, այժմ էլ կրկնում են՝ ցանկանում ենք ունենալ անկախ մտածելակերպով, քննադատող, վերլուծող աշակերտ, որը կլինի մեր ապագայի քաղաքացին»,- հայտարարել է ՀՀ ԿԳ նախարար Արայիկ Չարությունյանը՝ «Նյու Թեքնոլոջի Էդուքեյշն Ֆոնդ» բարեգործական հիմնադրամի կողմից Մերգեյան ակումբում կազմակերպված «Արդի կրթական զարգացման հեռանկարները» թեմայով քննարկման ժամանակ:

պարտականությունների բեռը եւս ուզում ենք դնել ուսուցչի վրա: Մենք հիմա պատրաստում ենք պայմանագրի նոր տարբերակ, որ ծնողը պետք է կնքի դպրոցի հետ: Սեպտեմբերին նոր պայմանագիրն արդեն պատրաստ կլինի եւ կառաջարկվի ծնողներին»: Նախարարի բնորոշմամբ՝ կրթական համակարգում բարեփոխումների ռազմավարական, երկարաժամկետ ծրագրերի մշակման մեկնարկից առաջ պետք է նախ գնահատել առկա իրավիճակի պատկերը. «Դժվար է առաջ գնալ, երբ ոտքերիդ տակ ճահիճ է: Այժմ համակարգում ճահիճի չորացման գործընթաց է տեղի ունենում, որից հետո միայն մենք կսկսենք երկարաժամկետ զարգացման ծրագրի մշակումը: 2011-15 թվականների ռազմավարական ծրագրի ազդեցությունը մեր կրթական համակարգի վրա զրոյական է եղել: Չեն կարծում, թե մա-

ենք նաեւ գիտության մասին օրենքը՝ կյանքի կոչելով այն գաղափարը, որ գիտությունը, հետազոտությունը պետք է վերադառնան բուհ»:

Քննարկմանը մասնակցել են ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի համեմատողովի փոխնախագահ Զովհաննես Զովհաննիսյանը, կրթության փորձագետ Սերոբ խաչատրյանը եւ «Այբ» դպրոցի տնօրեն Արամ Փախչանյանը: Ներկա են գտնվել դպրոցի տնօրեններ, ուսուցիչներ, կրթության ոլորտի մասնագետներ: Զովհաննես Զովհաննիսյանի համոզմամբ ուսուցչի հանրային վարկանիշը բարձրացնելու անհրաժեշտություն կա. «Ուսուցչի կերպարը, պետք է բարձրանա. հասարակության մեջ նա պետք է դառնա էտալոնային ֆիգուր: Պետք է նոր սերունդը մտածի, որ իրենց ուսուցիչը շատ կարեւոր է եւ նրա նկատմամբ ունենա լուրջ հարգանք», - իր խոսքում նշել է նա եւ կարծիք հայտնել, թե մենք կրթական դաշտում մեկնարկային ոչ վատ պայմաններ ունենք՝ հաշվի առնելով այն բարեփոխումների տեսլականը, որ կա այսօր. «Ուղղակի պետք է այդ ուղղությամբ աշխատենք բոլորս: Դա մեկ կամ երկու հոգուց կախված չէ, պետք է համընդհանուր ուժերով փորձենք այդ իրավիճակից դուրս գալ»: Կրթության փորձագետ Սերոբ խաչատրյանը, գտնում է, որ եթե մենք փորձենք կրթության բարեփոխումների հիմքում դնել ծրագրեր, դասագրքեր փոխելը, առավելագույնը հինգ տոկոս զարգացում կունենանք, ոչ ավելի. «Որովհետեւ խորքային խնդիրը դասագրքին ու ուսուցիչը չեն, այլ այն է, որ երեխաների ուղեղը զբաղված է այլ բաներով: Նրանց վրա կողմնակի ազդեցություններ կան, որոնց արդյունքում կրթական գործընթացից բավականին շեղված են: Մեր խնդիրը պետք է լինի երեխաներին կրթական գործընթաց հետ բերելը»: «Այբ» դպրոցի տնօրեն Արամ Փախչանյանի համոզմամբ՝ կրթության նկատմամբ հանրության վերաբերմունքը կփոխվի, երբ մարդիկ տեսնեն, որ որակի փոփոխություն կա: Արդեն դրան կհետեւի նաեւ ֆինանսավորման աճը, որը կբերի եւ աշխատավարձերի աճի, եւ կրթության պայմանների բարելավմանը. «Իսկ դրա համար պետք չէ սպասել, պետք է գործել», - շեղտել է Ա. Փախչանյանը:

Քննարկման ընթացքում թիվ 196 դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Սուսաննա Վարդանյանը, խոսքն ուղղելով մասնավորապես ԿԳ նախարար Արայիկ Չարությունյանին, հարց է բարձրացրել՝ դասարաններում աշակերտների խտության, ուսուցիչների դրույքաչափի 22 ժամյա ծանրաբեռնվածությունը նվազեցնելու եւ աշխատավարձերը բարձրացնելու վերաբերյալ: Ս. Վարդանյանի գնահատմամբ՝ ցածր աշխատավարձերի պատճառով տղամարդիկ խուսափում են դպրոց մտնել, որի հետևանքով էլ մենք ունենք տղամարդաթափ դպրոցներ: Ի պատասխան՝ նախարարը նշել է, որ թվարկված բոլոր խնդիրները գույքագրված են. «Այս իշխանությունն այնպիսին է, որ ֆինանս ունենալու, ամենափոքր հնարավորության դեպքում դրանք հաս-հատ լուծվելու են: Ձեր բարձրացրած խնդիրների մեծ մասը կապված է ֆինանսի հետ, որովհետեւ կամքի խնդիր մենք չունենք», - իր խոսքում նշել է նախարարը:



Նախարարի խոսքով՝ այժմ նախարարությունը պատրաստվում է մշակել նոր կրթական չափորոշիչներ, որոնք, հիմնված լինելով նախկին չափորոշիչների վրա, նաեւ կառաջարկեն նորություն, եւ այդ հիմքի վրա կծեւավորվեն նոր ծրագրեր եւ դասագրքեր: Այս ամբողջ աշխատանքները, ըստ նախարար Չարությունյանի, կավարտվեն 2023 թվականին. «Մենք ունենել ենք ուսուցիչների վերապատրաստման վատ համակարգ: Վերապատրաստումները երբեմն կրել են ձեւական բնույթ, եւ այժմ մեր խնդիրն է՝ լուրջ ուշադրություն դարձնել այդ հարցին եւ վերապատրաստումները իրականացնել պատշաճ մակարդակով: Դասավանդման նորարարությունները նաեւ օբյեկտիվ պատճառներով մեզ հասու չեն եղել: Կրթական համակարգում պետք է փոխել նաեւ փոփոխաբերությունները. կրթական գործընթացին մասնակից բոլոր խմբերը պետք է հստակ պատկերացնեն իրենց իրավունքներն ու պարտականությունները: Օրինակ՝ երբ հրապարակվեց ուսուցչի էթիկայի վարքականությունների նախագիծը, համընդհանուր դժգոհություն առաջ եկավ: Բայց իմ գնահատմամբ՝ այդ դժգոհությունները սուբյեկտիվ էին. մեկին դուր չէր եկել այդ փաստաթղթի հեղինակների անցյալը, մյուսին դուր չէր եկել, որ կանոնները հրապարակվել էին մինչեւ աշխատավարձի բարձրացումը... Բովանդակային քննարկում մասնավորապես էթիկայի կանոնների շուրջ տեղի չունեցավ, չնայած որ այդ փաստաթուղթը հրապարակվել էր որպես նախագիծ եւ պետք է քննարկվեր բարելավման նպատակով», - նշել է Արայիկ Չարությունյանը:

Մատիպ մի նոր ծրագրի մշակումից կրթական համակարգն ինչ-որ բան չափելու է», - նշել է նախարարը՝ արձագանքելով կրթության փորձագետ Սերոբ խաչատրյանի դիտարկմանը, թե կրթության զարգացման հեռանկարային ծրագրերն արդեն մի քանի տարի է, ինչ չի հաստատվում: Անդրադառնալով կրթության ազգային ինստիտուտի վերակազմավորման եւ մասնավորապես համալսարանի բովանդակային բարեփոխման հարցին՝ ԿԳ նախարարը նշել է, որ այդ հարցերի մասին շատ են խոսել նաեւ նախկինում. «Խոսել են, բայց չեն արել, որովհետեւ քաղաքական կամք չեն ունեցել: Սրանք շատ բարդ ռեֆորմներ են, բայց մենք դրանք անելու ենք: Դժվար է, որովհետեւ այդ ռեֆորմները ազդում են յուրաքանչյուրի վրա: Պահանջվում է փոխվել, եւ դա չի վերաբերում միայն ուսուցչին: Դա վերաբերում է բոլորին», - ասել է նախարարը եւ համոզմունք հայտնել, որ 21-րդ դարի աշակերտին չենք կարող թելադրել մեթոդներ՝ առանց հաշվի նստելու նրա նախասիրությունների հետ: Խոսելով առաջիկա ծրագրերի շուրջ՝ նախարարը տեղեկացրել է, որ մինչեւ 2023 թվականը նախակրթարաններում ապահովվելու է երեխաների մինչեւ 70 տոկոս ընդգրկվածությունը: «Բողոքում են, որ դասագրքերը ծանր են: Գտել ենք լուծում. դասագրքերը երկհատոր են դառնալու, որպեսզի աշակերտը առաջին կիսամյակում դպրոց համախի մի դասագրքով, մյուսին՝ երկրորդով: Սա հնարավորություն կտա պայուսակները երկու անգամ թեթեւացնել», - ասել է նա: Զարցին, թե ինչ փոփոխությունների պետք է սպասել բուհական համակարգում, նախարարը պատասխանել է, որ փոխվելու է Բարձրագույն կրթության մասին օրենքը. «Դրան միացնում

Զովհաննես Թումանյան - 150




Չայ ուխտավորին

Գնա՛ս բարով, այ ուխտավոր, Երանի քեզ, հայ ուխտավոր, Որ կարոտով ու սիրառատ Ուխտ ես գնում դեպ Արարատ: Ձեփյուռներով, ծաղկանց բույրով, Ինչպես ծնող սիրագորով, Քեզ կողջունեն գնրուխտ հազած Գեղամ սարերն ու Արագած, Ու կարոտած աչքի ընման Քեզ կըժպտա վճիտ Սևան, Որ լեռների շուքերի հետ Խաղ է անում, խայտուն վետ-վետ, Փայլվիլում է ծղփանքներով, Զորինում է լույսերի ծով, Եվ մերք վշտով ու տխրությամբ Սևանում է, ինչպես մութ ամպ...

Գնա՛ս բարով, այ ուխտավոր, Երանի քեզ, հայ ուխտավոր, Որ կարոտով ու սիրառատ Ուխտ ես գնում դեպ Արարատ: Ձեփյուռներով, ծաղկանց բույրով, Ինչպես ծնող սիրագորով, Քեզ կողջունեն գնրուխտ հազած Գեղամ սարերն ու Արագած, Ու կարոտած աչքի ընման Քեզ կըժպտա վճիտ Սևան, Որ լեռների շուքերի հետ Խաղ է անում, խայտուն վետ-վետ, Փայլվիլում է ծղփանքներով, Զորինում է լույսերի ծով, Եվ մերք վշտով ու տխրությամբ Սևանում է, ինչպես մութ ամպ...

Գնա՛ս բարով, այ ուխտավոր, Երանի քեզ, հայ ուխտավոր, Որ կարոտով ու սիրառատ Ուխտ ես գնում դեպ Արարատ: Ձեփյուռներով, ծաղկանց բույրով, Ինչպես ծնող սիրագորով, Քեզ կողջունեն գնրուխտ հազած Գեղամ սարերն ու Արագած, Ու կարոտած աչքի ընման Քեզ կըժպտա վճիտ Սևան, Որ լեռների շուքերի հետ Խաղ է անում, խայտուն վետ-վետ, Փայլվիլում է ծղփանքներով, Զորինում է լույսերի ծով, Եվ մերք վշտով ու տխրությամբ Սևանում է, ինչպես մութ ամպ...



1893

Աշխարհի հետ

Գիտական ավանդույթները վերագրագցնելու նպատակով

Աշխատանքային այցով Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գտնվող Չանրապետության նախագահ Արմեն Սարգսյանն այցելել է Եվրոպական հարավային աստղադիտարան, որն աստղագիտական հետազոտություններ իրականացնող աշխարհի խոշորագույն կենտրոններից է:

Նախագահ Արմեն Սարգսյանի եւ աստղադիտարանի ղեկավար կազմի հանդիպմանը գլխավոր տնօրեն, պրոֆեսոր Քսավիե Բարկոնը ներկայացրել է հաստատության գործունեությունը, իրականացվող հետազոտություններն ու ուսումնասիրությունները: Նա նշել է, որ միջազգային այս հեղինակավոր հաստատությունը ունեցել է բազմաթիվ բարձրաստիճան հյուրեր, բայց Արմեն Սարգսյանն առաջին պետության նախագահն է, ով այցելում է աստղադիտարան:



Նախագահ Արմեն Սարգսյանը խոսել է հայկական գիտական մտքի նվաճումների ու կրթական ոլորտում հայ մասնագետների գրանցած հաջողությունների մասին:

«Որպես Հայաստանի նախագահ՝ իմ նպատակն է երկիրը դարձնել գիտական կենտրոն, վերակենդանացնել մեր երկրի գիտական ավանդույթները», - նշել է Չանրապետության նախագահը: Նա ներկայացրել է հայկական գիտական մտքի ձեռքբերումները՝ մասնավորապես խոսելով Բյուրականի աստղադիտարանի, Երեւանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի գործունեության մասին: «Ես ցանկանում եմ առաջ մղել Հայաստանը՝ իբրև երկիր, որը հիմնված է գիտության, կրթության, զաղափարների վրա: Մենք պատրաստ ենք համագործակցել ձեզ նման հեղինակավոր միջազգային կենտրոնի հետ, լինելու ձեր գործընկերը», - ասել է Արմեն Սարգսյանը:



Հանրապետության նախագահը կազմակերպության ներկայացուցիչներին իրավիճակ է Հայաստան՝ մասնակցելու այս տարվա հունիսին առաջին անգամ մեր երկրում կայանալիք «Մտքերի զագաթնաժողովին»:

Պրոֆեսոր Քսավիե Բարկոնը ողջունել է նախագահի առաջարկն ու համագործակցության պատրաստակամությունը հայտնել:

Հանդիպումից հետո նախագահ Արմեն Սարգսյանը շրջայց է կատարել Եվրոպական հարավային աստղադիտարանի տարածքում, ծանոթացել աշխարհում ամենամեծ օպտիկական աստղադիտակի կառուցման աշխատանքներին:

1962 թվականին ստեղծված Եվրոպական հարավային աստղադիտարանի անդամ է 16 պետություն՝ Ավստրիան, Բելգիան, Զեխիան, Դանիան, Ֆինլանդիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իռլանդիան, Իտալիան, Նիդերլանդները, Լեհաստանը, Պորտուգալիան, Իսպանիան, Շվեդիան, Շվեյցարիան եւ Միացյալ Թագավորությունը:

Կազմակերպությունը, որի աստղադիտարանները գտնվում են Զիլիում, առաջատար դերակատարում ունի աստղագիտության ոլորտում միջազգային համագործակցության նախաձեռնման ու կազմակերպման մեջ:

Վերականգնվող Վանաձոր

Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակում կառուցվելու է 46 դպրոց

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Վանաձորում ծանոթացել է Վանաձորի հ. 7 հիմնական դպրոցի կառուցման շինարարական աշխատանքների ընթացքին, որոնք համակարգում են ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությունը եւ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը: Դպրոցը կառուցվում է Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակում, որն իրականացվում է ՀՀ կառավարության եւ Ասիական զարգացման բանկի համագործակցությամբ:

Ժամանակակից մոտեցումներով կառուցվող սեյսմակայուն այս դպրոցը կհամապատասխանի միջազգային չափանիշներին, բնական աղետների դեպքում՝ որպես ապաստարան, կծանոթալ տվյալ տարածաշրջանի բնակչությանը:

Վարչապետին տեղեկացվել է, որ դպրոցի շինաշխատանքները կա-

վարտվեն ընթացիկ տարվա մայիսին: Ուսումնական հաստատությունը կհամալրվի ժամանակակից գույքով եւ տեխնիկական միջոցներով: Նիկոլ Փաշինյանը կարեւորել է շինաշխատանքների որակյալ իրականացումն ու ընդգծել, որ դրանք պետք է պահել մշտական հսկողության ներքո:

Դպրոցը նախատեսված է երկու զուգահեռ հոսքերով՝ 432 աշակերտի համար: Վարչապետին զեկուցվել է, որ երկհարկանի այս կառույցը՝ 3857 քմ ընդհանուր մակերեսով, բաղկացած է երեք մասնաշենքից, որոնք միացված են սեյսմիկ կոնստրուկտիվ կարերով:

Դպրոցի նախկին շենքը 88-ի երկրաշարժից ստացած բազմաթիվ վնասվածքների հետեւանքով ճանաչվել է վթարային եւ ապանոտաժվել է: Այսօր ուսուցումն իրականացվում է «Տեխնոսարք» գործարանի եռահարկ ադմինիստրատիվ շենքում:

Նորակառույց դպրոցը նախատեսված է ապանոտաժված դպրոցի տարածքում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է ավելի քան մեկ միլիարդ դրամ:

Տեղեկանք. Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիրն իրականացվում է ՀՀ կառավարության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ կնքված վարկային պայմանագրի հիման վրա: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 107 մլն ԱՄՆ դոլար, որից բանկի վարկային միջոցները կազմում են 88,5 մլն դոլար, իսկ պետական համաֆինանսավորումը կազմում է 18,5 մլն դոլար: Ծրագրի հիմնական եւ առանցքային ցուցանիշը հանդիսանում է առնվազն 18900 աշակերտի անվտանգ կրթական պայմանների ապահովումը: Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակում հանրապետությունում կառուցվելու է 46 դպրոց:



«Ազնավուր» հիմնադրամ

Եվս մեկ ջերմ հանդիպում Երեւանում

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է աշխարհահռչակ շանտնյե Շառլ Ազնավուրի որդուն՝ Նիկոլա Ազնավուրին, ով հանդիսանում է «Ազնավուր» հիմնադրամի համահիմնադիրը:

Ողջունելով՝ Նիկոլ Փաշինյանը, մասնավորապես, նշել է. «Շատ ուրախ եմ Ձեզ հանդիպելու համար եւ ուրախ եմ, որ հանդիպում ենք Երեւանում: Հույս ունեմ, որ Ձեր հետագա ծրագրերն ավելի շատ կապված են Երեւանի հետ, համեմայնդեպս, մասնավոր կան այդպիսի հրապարակումներ: Հույս ունեմ, որ այդպես է, եւ ավելի հաճախ հնարավորություն կունենանք հանդիպել, շատ հետաքրքիր կլինի լսել Ձեր ծրագրերի մասին, թե ինչ եք ծրագրում անել Շառլ Ազնավուրի ժառանգությունը նաեւ Հայաստանում պահպանելու եւ Հայաստանը որպես ազնավուրյան կարեւոր կենտրոններից մեկը դարձնելու նպատակով եւ իմաստով»:

Նիկոլա Ազնավուրը շնորհակալություն է հայտնել վարչապետ Փաշինյանին՝ ջերմ ընդունելության համար եւ իավելել. «Շատ հաճելի է Ձեզ տեսնելը: Ամենից առաջ ցանկանում եմ Ձեզ շնորհակալություն հայտնել՝ Փարիզ այցելելու համար: Դուք գիտեք, որ դա շատ կարեւոր էր ու շատ հուզիչ անձամբ ինձ համար եւ իմ ողջ ընտա-



նիքի: Ցանկանում եմ Ձեզ հայտնել մեր երախտագիտությունը:

Ցանկանում եմ Ձեզ շնորհավորել վարչապետի պաշտոնը զբաղեցնելու կապակցությամբ: Ես անգամ քվեարկել եմ Հայաստանում: Մենք եկանք անաղմուկ, հատուկ քվեարկելու համար, քանի որ դա շատ կարեւոր էր մեզ համար:

Անգամ երբ ճանապարհորդում ենք կամ հեռու ենք, միշտ հետեւում ենք Հայաստանից ստացվող լուրերին

եւ շատ շնորհակալ ենք այն ամենի համար, ինչ Դուք փորձում եք անել Հայաստանի համար: Դա հեշտ չէ, բայց կարծում եմ՝ շատ դրական է, երբ մենք արտասահմանում տեսնում ենք, թե ինչ տքմաշան աշխատանք եք իրականացնում»:

Հանդիպման ընթացքում Նիկոլա Ազնավուրը վարչապետին պատմել է «Ազնավուր» հիմնադրամի գործունեության եւ առաջիկա ծրագրերի մասին:

«Շախմատ»

«Առարկայի դասավանդմանը կողմնակից եմ, բայց կան խնդիրներ, որոնք պետք է լուծվեն...»

ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արայիկ Զարուբյունյանը խորհրդակցություն է անցկացրել «Շախմատ» առարկայի ներդրման արդյունավետությունն ուսումնասիրող աշխատանքային խմբի հետ եւ Արթուրյանի անվան պետական հայկական մանկավարժական համալսարանում: Հանդիպմանը ներկա են եղել Հայաստանի շախմատի ակադեմիայի հիմնադիր տնօրեն, միջազգային գրոսմայստեր Սմբատ Լպուտյանը, ԿԳ նախարարության հանրակրթության վարչության ներկայացուցիչներ, մանկավարժական համալսարանի մասնագետներ: Հանդիպման նպատակը, ինչպես իր խոսքում նշել է նախարար Արայիկ Զարուբյունյանը, շախմատի դասավանդման ընթացքում առաջացած խնդիրների քննարկումն ու դասավանդման արդյունավետության բարձրացումն է: Արայիկ Զարուբյունյանը նշել է, որ ինքը «Շախմատ» առարկայի դասավանդման կողմնակից է, սակայն միաժամանակ ծնողների կողմից բարձրաձայնվում են մի շարք խնդիրներ, որոնք պետք է անպայման հաշվի առնվեն: Մասնավորապես՝ դժգոհություններ են հնչում առարկայի գնահատման եւ տնային առաջադրանքների բարդության վերաբերյալ:

Նախարարին ներկայացվել են մանկավարժական համալսարանի «Շախմատ» գիտահետազոտական հիմնադրամի կողմից իրականացված հետազոտություն արդյունքները: Առարկայի ներդրման արդյունավետությունը մասնագետները սկսել են ուսումնասիրել 2012 թվականից սկսած, այսինքն՝ ներդրմանը զուգահեռ: Կատարվել է բազմակողմ հետազոտություն՝ ինչպես է ազդում շախմատի ուսուցումը երեխայի մտածողության, վարքի եւ առաջադիմության վրա: Մասնագետների համոզմամբ՝ շախմատը օգնում է սովորողների մտածողության զարգացմանը, ինչպես նաեւ նպաստում ինքնուրույնությանը: Առարկայի ուսուցումը դրական է անդրադառնում նաեւ երեխաների ընդհանուր առաջադիմության վրա: Մասնավորապես՝ ուսումնասիրվել է, թե այլ առարկաներից ինչ առաջադիմություն ունեն 2-4-րդ դասարաններում շախմատ սովորած եւ սովորած երեխաները: Արդյունքները փաստել են՝ շախ-



մատ առարկան սովորած երեխաներն ավելի բարձր առաջադիմություն են ցուցաբերել: Բացի այդ՝ 2-4-րդ դասարանների սովորողների շրջանում կատարված հարցումների արդյունքներով՝ երեխաների մեծ մասը «Շախմատը» նշել են սիրված առարկաների եռյակում: Հետազոտությունը կատարած մասնագետների գնահատմամբ՝ առարկայի դասավանդման հետ կապված հիմնական խնդիրները պայմանավորված են ուսուցիչների գործողով: Նախկինում «Շախմատ» առարկայի դասավանդման փորձ չի եղել: Այն դասավանդվել է խմբակի ձևով՝ որպես ֆակուլտատիվ պարապմունք: Նախկին խմբակավարները, որոնք հետագայում դարձան դասավանդող ուսուցիչներ, չէին տիրապետում ծրագրային նյութի դասավանդման մանկավարժական եւ մեթոդական հմտություններին:

Շուրջ 1278 ծնողների շրջանում կատարված ընտրանքային հարցման արդյունքները ցույց են տվել՝ ծնողների 70 տոկոսը գտնում է, որ շախմատը նպաստում է տրամաբանության զարգացմանը, սակայն միաժամանակ նրանց մի մասը դժգոհ է առարկայից, քանի որ տնային առաջադրանքները բարդ են, եւ իրենք դժվարանում են օգնել երեխաներին: Մյուս դժգոհությունն այն է, որ աշակերտները հիմնականում շախմատից ավելի ցածր գնահատականներ են ստանում, քան մնացած առարկաներից, իսկ դա բացասական է

անդրադառնում միջին գնահատականի վրա: Որպես տնային առաջադրանք տրվող խնդիրները ինքնուրույն կարողանում են լուծել երեխաների 38 տոկոսը, 62 տոկոսը դիմում է ծնողների օգնությանը, իսկ ծնողների 29 տոկոսը դժվարանում է օգնել երեխաներին: Հարցման ընթացքում ծնողները որոշ առաջարկություններ են ներկայացրել, այդ թվում նաեւ առարկայի ուսուցումը 3-րդ դասարանից սկսելու վերաբերյալ: Հարցման մասնակիցներից ընդամենը 4-ն են առաջարկել՝ շախմատը հանել դպրոցից:

Հանդիպման ընթացքում նշվել է, որ այս պահին ընթացքի մեջ են մի քանի այլ հետազոտություններ եւս: Բացի այդ՝ «Շախմատ» առարկայի ներդրումը պետական կրթական ծրագրում առաջացրել է հետաքրքրություն միջազգային մասնագիտական եւ գիտական շրջանակներում:

Ամփոփելով հանդիպումը՝ Շախմատի ակադեմիայի հիմնադիր-տնօրեն Սմբատ Լպուտյանը ընդգծել է, որ ի սկզբանե առարկայի ներդրման նպատակը եղել է ոչ թե շախմատիստներ պատրաստելը, այլ սովորողների տրամաբանական մտածողության զարգացմանը նպաստելը:

Նախարարն առաջարկել է, հաշվի առնելով հետազոտության արդյունքները, իրականացնել քայլեր՝ առարկայական ծրագրի բարեփոխման ուղղությամբ:

Կարինե Մանուկյան

Հովհաննես Թումանյան - 150



Քառյակներ

Հե՛յ ագահ մարդ, հե՛յ անգոհ մարդ,  
միտքըդ երկար, կյանքըդ կարճ,  
Քանի՛ քանիսն անցան քեզ պես,  
քեզնից առաջ, քո առաջ.  
Ի՛նչ են տարել նըրանք կյանքից,  
թե ինչ տանես դու քեզ հետ,  
Խաղաղ անցիր, ուրախ անցիր  
երկու օրվան եւ ճամփեդ:

Քուն թե արթուն՝ օրիս շատը  
երազ եղավ, անցկացավ,  
Երազն էլ, նուրբ ու խուսափուկ,  
վըռազ եղավ, անցկացավ.  
Վըռազ անցան երազ, մուրազ,  
ու չըհասա ոչ մեկին,  
Կյանքս թեթև տանուլ տրված  
զըրազ եղավ, անցկացավ:

Ո՞ր աշխարհքում ունեն շատ բան,  
միտք եմ անում՝ է՞ս, թե էն.  
Մեջտեղ կանգնած՝ միտք եմ անում,  
չեմ իմանում՝ է՞ս, թե էն.  
Աստված ինքն էլ, տարակուսած,  
չի հասկանում ինչ անի.  
Տանի՛, թողնի՛, — ո՞րն է բարին,  
ո՞ր սահմանում, է՞ս, թե էն:

1919

Երնեկ էսպես՝ անվերջ քեզ հետ -  
իմ կյանքի հետ լինեի.  
Հազար երնեկ՝ դաշտում մենակ՝  
երկրների հետ լինեի.  
Բայց ո՞վ կըտա եմ վայելքը՝  
ինքնս ինձ էլ չըզգայի,  
Ու հալվեի, ծավալվեի,  
ամենքի հետ լինեի...

1920

Ես շընչում եմ միշտ կենդանի  
Աստծու շունչը ամենուր.  
Ես լըսում եմ Նըրա անլուռ  
կանչն ու հունչը ամենուր.  
Վեհացում է ու վերացում  
ամենալուր իմ հոգին  
Տիեզերքի խոր մեղեդին  
ու մըրմունջը ամենուր:

Ամեն անգամ Քո տրվածօր  
Երբ մի բան ես Դու տանում,  
Ամեն անգամ, երբ նայում եմ,  
թե ի՞նչքան է դեռ մնում, —  
Չարմանում եմ, թե՛ ո՞վ Շըռայլ,  
ի՞նչքան շատ ես տվել ինձ,  
Ի՛նչքան շատ եմ դեռ Քեզ տալու,  
որ միանանք մենք նորից:

1921

Գի՛րք սպիրիտ

Փետրվարի 19-ը՝ հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը, ահա արդեն մի քանի տարի Հայաստանում նշվում է որպես Գի՛րք նվիրելու օր: Երեսնամի փկտոր Հանքարձույանի անվան հ. 12 հիմնական դպրոցի 3ա դասարանի աշակերտները դասվար Գ.Հովհաննիսյանի նախաձեռնությամբ այցելեցին Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոն՝ գրքեր եւ գրեմական պիտույքներ նվիրեցին վիրավոր զինվորներին: Նաեւ օրվա խորհրդին համահունչ՝ երեխաները գրական մի հատված մատուցեցին՝ ներկայացնելով իրենց թուանյանին:



Աշխարհի հետ

«Ռոքֆելեր եղբայրների հիմնադրամ»-ում

Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը Սյունիսենում հանդիպել է «Ռոքֆելեր եղբայրների հիմնադրամ»-ի (Rockefeller Brothers Fund) նախագահ Ստեֆան Հայնցի հետ:



Զրուցակիցները խոսել են գիտական հետազոտությունների բնագավառում, ինչպես նաև կլիմայի փոփոխությունների ու ջրային պաշարների կառավարման ոլորտներում համագործակցության, համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունների մասին:

«Ռոքֆելեր եղբայրների հիմնադրամ»-ը ստեղծվել է 1940 թվականին՝ Ռոքֆելեր ընտանիքի անդամների կողմից: Հիմնադրումից ի վեր այն մշտապես աջակցել է փոփոխություններին, որոնք միտված են ավելի քաղաքակիրթ, կայուն ու զարգացած աշխարհի կառուցմանը:

Նոր գործընկերության ակնկալիքով

Աշխատանքային այցով Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանն այցելել է Սյունիսենի տեխնիկական համալսարան:

Համալսարանի ղեկավարության, պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ հանդիպման սկզբում համալսարանի նախագահ Վոլֆգանգ Հերմանը, ողջունելով Արմեն Սարգսյանի այցը ուսումնական հաստատություն, նշել է, որ իրենց համար մեծ պատիվ է հյուրընկալել Հայաստանի նախագահին, ով նաև գիտնական է: Նա ներկայացրել է համալսարանի գործունեության հիմնական ուղղությունները, մասնավորապես՝ բնական գիտությունների ու բժշկության ոլորտներում:



Նշելով, որ գիտության ոլորտում մեր ունեցած ավանդույթները ոչ միայն պետք է պահպանել, այլև զարգացնել եւ հասցնել նոր մակարդակի, նախագահ Արմեն Սարգսյանն ասել է. «Ես ցանկանում եմ զարգացնել համագործակցությունը հայկական եւ գերմանական համալսարանների, երկու երկրների գիտնականների միջև»:

Նա ընդգծել է, որ Հայաստանը հիմնվում է ոչ թե բնական պաշարների, այլ մարդկային ռեսուրսների վրա: «Մեր հիմնական լուրջնախնդիրը լինելու են նոր տեխնոլոգիաները, նորարարությունները, ստարտափները: Ես այստեղ եմ նոր գործընկերություն սկսելու համար եւ աջակցելու եմ բոլոր այն ջանքերին, որոնք ուղղված են զարգացնելու Հայաստանի գիտական եւ տեխնոլոգիական ներուժը», - ասել է նախագահ Արմեն Սարգսյանը՝ հրավիրելով ներկայից հայտնի շայնստան:

Վոլֆգանգ Հերմանը, բարձր գնահատելով Հայաստանում գիտության զարգացմանն ուղղված՝ նախագահ Արմեն Սարգսյանի ջանքերը, նշել է, որ պատրաստ են համագործակցության՝ հատկապես ընդգծելով, որ Սյունիսենի տեխնիկական համալսարանը իրականացնում է միջազգային փոխանակման բարձրակարգ ծրագրեր:

Ամենաշատ ընթերցվածը

«Երկրի հակառակ կողմը»-ը գործողության մղող հիմնական շարժառիթը դարձավ»

Նիկոլ Փաշինյանը մասնակցել է իր գրքի շուրջ կազմակերպված քննարկմանը

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեւանի «Լոֆթ» ինքնագարգացման կենտրոնում մասնակցել է իր հեղինակած՝ «Երկրի հակառակ կողմը» գրքի քննարկմանը: Քննարկումը նախածեղծել էին «Անտարես» հրատարակչությունը եւ «Լոֆթ» ինքնագարգացման կենտրոնը:

Հանդիպման բանախոսները՝ գրականագետներ Ալվարո Սեմիրոյան-Բեքմեյանը եւ Հայկ Համբարձումյանը, լրագրող, բանաստեղծ Միեր Արշակյանը եւ արձակագիր Գրիգը, ինչպես նաև գրականագետ, «Անտարես» հրատարակչության գլխավոր խմբագիր Արքմենիկ Նիկողոսյանը, ներկայացրել են իրենց վերլուծությունը գրքի բովանդակության, դրանում արծարծված հարցերի, գրքի կառուցվածքի, այլ հեղինակների ազդեցության, ինչպես նաև դրա գեղարվեստական, գրականագիտական եւ քաղաքական նշանակության մասին:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհակալություն է հայտնել բանախոսներին՝ գնահատականների համար՝ դրանք որակելով որպես փոխլրացնող եւ իր խոսքում անդրադարձել գրքի ստեղծման պատմությանը, դրա շարժառիթներին: «Այսօր որոշել եմ գրքի ստեղծման ամբողջ համատեքստը բացել եւ նրա հետագա ծակտազիրը: Երբ ես ընդհատակում հայտնվեցի մի տեղում, երբ արդեն մշտական կապ ունեի արտաքին աշխարհի հետ, այսինքն՝ Հակոբ Սիմոնյանն ամեն օր գնում-գալիս էր եւ ասում էր, թե ինչ է կատարվում, ինչ են խոսում մարդիկ, այդ ժամանակ շատ հաճախ ստանում էի տեղեկատվություն, որ մարդիկ խոսում են՝ այս կամ այն դեպքում ասում է թաքցված, բայց ամենամեծ կարծիքն այն է, որ Դուբայում են տեսել, Աթենքում եւ այլն: Այդ ժամանակ մասնաշաղկապում հրապարակումներ հայտնվեցին, որ Ազգային անվտանգության ծառայությանը հրահանգված է, որ ինձ հայտնաբերելու դեպքում ոչ թե ձերբակալեն, այլ զինված դիմադրության իմիտացիա ստեղծեն եւ ֆիզիկապես ոչնչացնեն: Սա մի իրավիճակ էր, որ իմ առաջ կանգնած էր, եւ ես առաջինը մտածում էի հետեւյալը. եթե այդ բանը տեղի ունենա, այսինքն՝ ինձ ֆիզիկապես ոչնչացնեն, հարց է՝ մարդիկ ի՞նչ կմտածեն, կասեն՝ ո՞վ էր, ի՞նչ էր ուզում անել, ինչու՞ եկավ, ի՞նչ արեց, եւ ինձ համար նպատակ էր դրված ստեղծել ինչ-որ բովանդակություն, որովհետեւ այդ համոզվածությունն արդեն կստիպի մտնել իմ տրամաբանության մեջ: Այդտեղից առաջացավ գաղափարը՝ գրել ի սկզբանե հողվածների շարք, որը նրանց կշեղի ինձ փնտրելու ճիշտ ճանապարհից: Այս երկու մտիվացիան է եղել:



Ինչու՞ հակառակ կողմից: Գրվածքի ամբողջ իմաստն այն է, որ եթե նկատել եք՝ ես Մյասնիկյանի արձանի կողմից գնում եմ դեպի Ազատության հրապարակ: Ամբողջ գաղափարը հետեւյալն է, որ Մյասնիկյանի արձանի մոտից գնալ Ազատության հրապարակ այնպես, որ քո գնացած ճանապարհը հետ չգնաս, այսինքն՝ անընդհատ առաջ գնաս: Առաջ գնալով՝ քո գործողության մեջ չլինի հետ գնալու, մահանջելու գործընթաց: Երկրորդը՝ դու հեռանում ես, ըստ էության, փախուստ է, հետախուզվողի

կարգավիճակ, այնպես չստացվի հանկարծ, որ դու փախար քո հայրենիքից, դու փախար ինքը թեզմից, այսինքն՝ ինչպե՞ս անել, որ Հայաստանից հեռանալ, բայց Հայաստանից չհեռանալ: Ինչպե՞ս ասել, որ Հայաստանից հեռացար, բայց չստացվի, որ Հայաստանից փախար: Միակ տարբերակն այն է, որ դու էլի Հայաստան ես գնում: Վեպի գաղափարն այն է, այնտեղ կա տող, որ ես Մյասնիկյանի արձանի մոտից գնում եմ Ազատության հրապարակ եւ գնում եմ պարզապես երկրի հակառակ կողմից: Կատող, որ «բայց չէ՞» որ կա նաև այլ ճանապարհ, կարծ ճանապարհ, բայց ո՞վ ասաց, որ կարծ ճանապարհը ճիշտ ճանապարհն է: Շատ հնարավոր է, որ ճիշտ ճանապարհը երկար ճանապարհն է, եւ հենց դա է պատճառը, որ երկրի հակառակ կողմից գնալու անհրաժեշտությունն է առաջացել:

Հաջորդ ամենակարեւոր սկզբունքային պահը. ինչպե՞ս սենյակում փակված Արեշուն ճամփորդել ամբողջ աշխարհով: Դրա միակ տարբերակը գիրքն է եւ գրականությունը: Ըստ էության, ամբողջ ճամփորդությունը ընթերցանությունների շարք է, գրքերի շարք է, երկխոսություն է հերոսների հետ եւ իմ փորձն է մտնել այդ գրքի մեջ եւ ապրել այդ գրքերի մեջ: Օրինակ՝ Վրաստանի հետ կապված բոլոր դրվագները Նոդար Դումբաձեի գրականությունն է, որ ես հենց այդ ընթացքում կարդացել եմ: Վրաստանից դեպի Գերմանիան եզուպոսի առակներն են, եւ նախ վրայի երկխոսությունները ամբողջությամբ եզուպոսի առակներն են: Հայաստանի մեջ Իմաստուն ծերուկը, որ ուղեկցում է, իհարկե, Թումանյանն է, եւ Թումանյանը հերոսին ուղեկցում է Գումաստանից դեպի Մակեդոնիա՝ Մարկոյի միջոցով: Մարկոն սերբական էպոսի հերոսն է, որը Թումանյանը թարգմանել է եւ հայերենում ներկայացրել: Հետագայում շարունակությունը Կաֆկայի «Դատավարություն» վեպի մեջ է, որովհետեւ իմ իրավիճակը իրականում շատ նման էր այդ վեպի իրադարձություններին եւ այդպես շարունակ՝ Էռեստ Դեմիզուեյ, Էրիկ Մարիա Ռեմարկի «Ապրելու ժամանակը եւ մեռնելու ժամանակը», Վալտեր Աբրոսի «Քվեմբին Դորվարդ» եւ այլն:



շարունակությունը էջ 10

Բուհ

# Հոգաբարձուների խորհուրդներն առավելագույնս արդյունավետ են գործելու

ՀՀ կրթության և գիտության նախարար Արայիկ Գրիշյանը Մատենադարանում հանդիպում է ունեցել ՀՀ պետական բուհերի հոգաբարձուների խորհուրդների նախագահների հետ, որը կազմակերպել էր Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ)՝ իր 10-ամյակի միջոցառումների շրջանակում: Ողջունելով խորհուրդների նորընտիր նախագահներին՝ ԿԳ նախարարը նշել է, որ հանդիպման նպատակն է ապահովել բուհերի հոգաբարձուների խորհուրդների տեղեկացվածությունը միմյանց խնդիրներին և դրանց լուծման դրական փորձի կիրառելիությունը իրենց բուհերում: «Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ բուհերի հոգաբարձուների խորհուրդների ձևավորման տրամաբանությունն ամբողջությամբ փոխվել է. եթե նախկինում դրանք բարձրագույն կրթության հոգաբարձուների գործիքներ էին, ապա այս անգամ մենք առավելագույնս փորձել ենք խուսափել դրանից, ինչը, կարծում եմ, դրական ազդեցություն կունենա բուհերում որոշումների կայացման որակի վրա և թույլ կտա ապահովել բուհերի ինքնավարությունը և ակադեմիական ազատությունները: Հոգաբարձուների խորհուրդները պետք է առավելագույնս արդյունավետ գործեն, այն է՝ չսահմանափակվեն միայն խորհուրդներում հաշվետվություններ լսելով և հաստատելով, այլ կիրառեն իրենց ունեցած բոլոր գործիքակազմերը և բախանցիկ դարձնեն բուհերի գործունեությունը: Հոգաբարձուների խորհուրդ-



ները պետք է չդառնան ռեկտորների որոշումները հաստատող մարմին և բացառեն շահերի բախումը»,- նշել է Արայիկ Գրիշյանը՝ անդրադառնալով նաև բուհերի ֆինանսական օպտիմալացման հարցերին: Նախարարի խոսքով՝ նախկինում որոշ բուհերում բյուջետային տողերը և աշխատատեղերը ուռճացվել են, հետևաբար խորհուրդները պետք է ուսումնասիրեն այդ խնդիրը և համապատասխան առաջարկներ անեն, որպեսզի դրա արդյունքում լրացուցիչ ֆինանսներ խնայվեն՝ դրանք ուղղելով այլ նպատակների իրականացմանը: Արայիկ Գրիշյանը նաև անդրադարձել է նաև բուհերի հոգաբարձուների խորհուրդներում գործառնության ներդրման անհրաժեշտությանը: Նախարարը ընդգծել է նաև բուհերի տրամադրվող պետապատվերի տեղերը պահանջարկ ունեցող մաս-

նագիտություններին տրամադրելու և աշխատաշուկայում տեղի ունեցող փոփոխությունները հաշվի առնելու անհրաժեշտությունը: Իր խոսքում ՈԱԱԿ-ի տնօրեն Ռուբեն Թովիյանը անդրադարձել է բուհերում գործող որակի ապահովման կենտրոնների գործունեության կարևորությանը և դրանք անկախ մարմիններ դարձնելու անհրաժեշտությանը: Բուհերի հոգաբարձուների խորհուրդների նախագահները ողջունել են մեծ հանդիպում անցկացնելու նախաձեռնությունը՝ հույս հայտնելով, որ դրանք կկրեն շարունակական բնույթ: Հանդիպման ավարտին նախարարը շնորհակալություն է հայտնել ներկայից ընդհանուր և շահագրգիռ քննարկման համար և բոլորին մաղթել արդյունավետ աշխատանք:

# Մագիստրոսական թեզերը՝ մարզի զարգացման ծրագրերի հիմքում

Արարատի մարզի զարգացման ռազմավարական ծրագրի շրջանակում մարզպետարանի և ՀՀ մի շարք առաջատար բուհերի միջև կնքվել է համագործակցության հուշագիր՝ մարզի արդյունաբերական, գյուղատնտեսական, բնապահպանական, կառավարման, զբոսաշրջության, համայնքների զարգացման ծրագրերը և առկա խնդիրները որպես ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաներ հաստատելու վերաբերյալ:




ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ Գրիշյան Թամրայանը ողջունել է Արարատի մարզպետի նախաձեռնությունը և շնորհակալություն հայտնել բուհերի ղեկավարներին՝ արագ արձագանքելու համար: «Կրթության և գիտության նախարարությունը միշտ պատրաստակամ է աջակցել նման ծրագրերին: Մենք հույս ունենք, որ նախաձեռնությունը կհաջողի, և իրականացված հետազոտություններն իրոք կնպաստեն Արարատի մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը»,- իր խոսքում նշել է փոխնախարարը: Արարատի մարզպետ Գարիկ Սարգսյանը նշել է, որ հաշվի առնելով Արարատի մարզի արդի պահանջներն ու հեռանկարները՝ հուշագրով բուհերի մագիստրոսներին առաջարկվում է որոշակի թեմաներով իրականացնել լոկալ և առարկայական ուսումնասիրություններ, որոնք հետագայում կարող են դառնալ տվյալ ոլորտի աշխատանքային կամ բիզնես (ներդրումային) ծրագրեր՝ նպաստելով մարզի բազմաոլորտ զարգացմանը, ինչպես նաև կայուն երաշխիքներ տրամադրել ոլորտն ուսումնասիրած ուսանողներին աշխատատեղերով ապահովման հարցում: «Արդյունքում կծեռավորվի բուհ-մարզպետարան-մասնավոր հատված փոխշահավետ համագործակցություն, երբ մագիստրոսական թեզերն ավելի արդյունավետ կծառայեն իրենց նպատակին և չեն դառնա

Նշենք, որ համաձայն հուշագրի՝ մարզպետարանը պատրաստակամ է բուհին ներկայացնել մարզում առկա որևէ տեղային հիմնախնդիր և/կամ մասնավոր գործընթաց, իսկ բուհն իր հերթին՝ մասնագիտացված ամբիոններում իրականացվող փորձաքննությունների (հետազոտությունների, վերլուծությունների) միջոցով տվյալ հիմնախնդիրներից գիտական հենքով ձևավորել մագիստրոսական թեզերի, առենախտությունների և այլ գիտագործնական աշխատանքների թեմաներ: Նշենք, որ հուշագիրը ստորագրվել է Արարատի մարզպետարանի և Երեւանի պետական համալսարանի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, ճարտարապետության և շինարարության հայաստանի ազգային համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի միջև:

Գրիշյան ԳՈՒՅԱՆԻՍՅԱՆ

## Հովհաննես Թումանյան - 150



### Քառյակներ

\*\*\*  
 Հազար տարով, հազար դարով  
 առաջ թե ետ, ի՞նչ կա որ.  
 Ես եղել եմ, կա՛մ, կըլի՞նեմ  
 հար ու հավետ, ի՞նչ կա որ,  
 Հազար էսպէս ձևեր փոխեմ,  
 ձևը խաղ է անցավոր,  
 Ես միշտ հոգի, տիեզերքի  
 մեծ հոգու հետ, ի՞նչ կա որ:  
 \*\*\*  
 Աստղային երազների  
 աշխարհներում լուսակաթ,  
 Մեծ խոհերի խոյանքների  
 հեռուներում անարատ,  
 Անհիշելի վերհուշերի  
 մըշուշներում մըրբաղոտ՝  
 Երբեմն, ասես, ըզգում եմ ես,  
 թե կըհասնեմ Նըրա մոտ...  
 \*\*\*  
 Բարձր է հընուց աշխարհըն Հայոց  
 ու Մասիսը երկնադետ.  
 Իմ խոր հոգին էն բարձունքին  
 խոսք է բացել Նըրա հետ —  
 Անհաս բանից, ըսկզբանից,  
 Երբ չըկան էլ դեռ չըկար,  
 Մինչև վախճանն անվախճանի  
 քըընում է դարե դար:  
 \*\*\*  
 Կյանքըս արի հըրապարակ,  
 ոտքի կոխան ամենքի.  
 Խափան, խոպան ու անպըտուղ,  
 անցավ առանց արդյունքի:  
 Ինչքա՛ն ծաղիկ պիտի բուսներ,  
 որ չըբուսավ էս հողին...  
 Ի՛նչ պատասխան պիտի ես տամ  
 հող ու ծաղիկ տըվողին...  
 \*\*\*  
 Իմ կընունքին երկինքը՝ ժամ,  
 արևը՝ ջախ սըրբազան,  
 Ծիածանը նարոտ եղավ,  
 ամենքի սերն՝ ավազան.  
 Սարը եղավ կընքահայրըս,  
 ցողը՝ մյուռն կենսավետ,  
 Ու կընքողըս Նա ինքն եղավ,  
 որ սահմանեց ինձ պոետ:  
 1921  
 \*\*\*  
 Տիեզերքում աստվածային  
 մի ճամփորդ է իմ հոգին.  
 Երկրից անցվոր, երկրի փառքին  
 անհաղորդ է իմ հոգին.  
 Հեռացել է ու վերացել  
 մինչ աստղերը հեռավոր,  
 Վար մնացած մարդու համար  
 արդեն խոթ է իմ հոգին:  
 1922

# «Երկրի հակառակ կողմը»-ը գործողության մղող հիմնական շարժառիթը դարձավ»

սկիզբը էջ 8

«Ամբողջ այդ ճանապարհը պարտադիր գրականության հետ կապ ունի՝ ճապոնական գրականություն, Կուբայի հատվածը Չե Գեարայի մասին պատմող գրքի տպավորություններն են, Ֆրանսիայում՝ Շառլ դը Գոլ եւ Ֆրանսուա Սագանի «Բարեւ թախիծ», Շուկչինը, Գոգոլի «Մեռած հոգիները», որովհետեւ այնտեղ ընտրակեղծարարության տրամաբանությունը դրված էր, եւ այդպես շարունակ, այսինքն՝ ամեն հատված կոնկրետ գրական ստեղծագործության հետ կապված է: Այս հատվածներն իրար հետ կապված են այն մասերի հետ, որոնք, այսպես ասած, իմ սուվերեն ստեղծագործությունն են, իմ սուվերեն տեքստն են եւ վերաբերմունքը, որը հենց ստեղծված է այդ տրամաբանության մեջ:

մանակ «Ելք» խմբակցության ղեկավարն էի, ինչպես գրքի հետեւում գրել եմ, Յայկ Կոստանյանը հանդիպում էր ցանկացել: Յանդիպեցինք, ինքն ինձ ասաց՝ խնդրում եմ թույլ տաք, որպեսզի ես այդ գիրքը հրատարակեմ: Ասացի՝ հրատարակչի փորձ ունե՞ք, թե՞ ոչ, այսինքն՝ ինքը որպես հրատարակչի բոլոր առումներով անընդհատ, թող մերի ինձ, անվստահություն էր ներշնչում, թե արդյոք ինքն այդ գործը կարող է կազմակերպել: Մյուս կողմից, այդ հարցը կար, թե իմաստ ունի՞ արդյոք սա տպագրել: Ես ասացի, որ մինչ այդ հարցի պատասխանը տալը ինձ անհրաժեշտ է կարդալ այս գիրքը, հասկանալ, թե ինչ է գրված: Եվ երբ կարդացի գիրքը, այնպիսի տպավորություն էր, որ ես ինքս ինձ նամակ եմ գրել 10 տարի առաջ, այսինքն՝ սա խոսակցությունն է ինքս

որ գլխավոր խմբագրի իմ աշխատասենյակում էլ ես բանտում եմ, ինչ-որ տեսանելի եւ անտեսանելի բանտապահներ կան, հետո, երբ ճանաչողություն եմ, միեւնույն է, ինձ հետ է այդ խցիկը, բանտախցիկը քարշ եմ տալիս ամբողջ աշխարհում, հետո երբ բանտախցիկում եմ՝ կրկին բանտախցիկում եմ: Անկեղծ ասած, մի քանի օր առաջ մտածում էի, որ ես կրկին բանտախցիկում եմ: Ինչո՞ւ հիմա առավել, քան նախկինում, որովհետեւ հիմա ես ամեն օր գտնվում եմ մի տեղում, աշխատում եմ մի աշխատասենյակում, որտեղ նույնիսկ հնարավոր չէ պատուհանը բացել, գլուխը հանել ու մաքուր օդ շնչել: Իհարկե, ինձ թող ներեն Պետական պահպանության ծառայության իմ ընկերները, բայց անընդհատ ուր գնում եմ, գնում եմ գինված մարդկանց ուղեկցություններ: Այստեղ պատկերն առավել հիշարժան է դառնում, եթե ես ձեզ ասեմ, որ հիմա իմ ընկերներից մեկը, երբ ես բանտում էի, աշխատում էր «Երեւան կենտրոն» քրեակատարողական հիմնարկում եւ ամեն օր դուռը բացում էր, ինձ ուղեկցում քննության, իսկ հիմա նա աշխատում է իմ թիկնազորում եւ շարունակում է ինձ ուղեկցել:



PRESS OFFICE OF THE GOVERNMENT OF ARMENIA

գան, եւ իրական հեղափոխականը երբեք իշխանություն չի դառնում: Այս համատեքստում իր այժմյան զգացողության եւ մտածելակերպի մասին հարցադրմանը վարչապետը պատասխանել է. «Սա ամենակարեւոր հարցերից է, որովհետեւ իմ պատկերացումս հեղափոխությունը, ինչպես հստակ գրված է, հենց այդպիսին է: Նաեւ այն համատեքստում, որ ասում եմ՝ այսպես ասում է, այնպես անում, շատ կարեւոր հարց է:

«Երկրի հակառակ կողմը» գրքի հիմնական ուղերձն այն է, որ անհատական ջանքը, մի մարդու գործողությունը գլոբալ ազդեցություն ունի ամեն ինչի վրա. «Այս գրքի լեյտմոտիվներից կարելուհարկավոր է՝ ցույց տալ անհատի անցած ճանապարհի գործողությունների ազդեցությունը գլոբալ աշխարհի վրա: Ինձ համար ակնհայտ է, որ եթե այս գիրքը չգրվեր, եւ 2017 թ. վերջ-2018 թ. սկզբին չկարդայի, չգիտեմ՝ էլի նույն գործողությունները կանե՞ն, թե՞ չէ՞ն: 2016 թ. ես իմ ֆեյսբուքյան էջում հայտարարեցի հայ գրականության ընթերցման տարի, որի պատճառն այն էր, որ ես զգացի՝ սովորական ինֆորմացիոն հոսքերը մեր իրականությունը պատասխաններ չեն տալիս: Եվ քանի որ ունեմ այն կանխավարկածը, որ գրականության մեջ բոլոր հարցերի պատասխանները կան, սկսեցի կարդալ մեր ժամանակակից գրողներին, որպեսզի գտնեմ այդ հարցերի պատասխանները: Իհարկե, չիացրեցի ամբողջ ծավալով, կուզենայի ընթերցել բոլորին, բայց, իմ կարծիքով, դա մեր հետագա իրադարձությունները: Այն ժամանակ իմ մտքում շատ կարեւոր դեր ունեցավ, երբ ես, իմ եւ իմ քաղաքական գործունեության ճգնաժամը զգալով, հասկացա, որ ճգնաժամից դուրս գալու համար պետք է դիմել գրականությանը: Այն ժամանակ իմ մտքով չէր անցնում, որ հնարավոր է նաեւ այս գիրքը, այս գրվածքն այդպիսի դերակատարում ունենա: Բայց արդյունքում սա այդպիսի գրականության կամ տեքստի հետեւողական ընկալման ճանապարհն է, երբ դու հատկապես գրականության, գրական տեքստերի մեջ փորձում ես գտնել լուծումներ»: Վարչապետը համոզմունք է հայտնել, որ այսօրվա խնդիրների լուծումները մեր ժամանակակից գրողների տեքստերի մեջ կան եւ կոչ արել ավելի շատ կարդալ արդի հայ գրականություն: «Մեր ժամանակակից գրողների այն գրքերը, որ կարդացել եմ, ավելի են խորացրել համոզմունքս. մենք այսօր ունենք տաղանդավոր հրաշալի գրողներ եւ վերջին 10 տարում շայտադրում մեր գրականությունը մեծ վերածմունք է ապրում, որ մենք դեռ չենք գիտակցում», - նշել է Նիկոլ Փաշինյանը: Վարչապետը նաեւ տեղեկացրել է, որ այժմ աշխատում է իր բանտային օրագրի լույսընծայման վրա՝ օրական 10-20 որպես հատկացնելով այդ գործին:

Ես տեքստի ընթերցումն ավարտել եմ 2018 թ. փետրվարին: Բնականաբար, 2 ամիս հետո այս տեքստի ընթերցումը շատ թարմ էր, եւ երբ եկավ 2018 թ. ապրիլը եւ արդեն պարզ էր, որ Սերժ Սարգսյանը հրաժարվում է տվել, եւ երբ կար այդ կարգախոսը՝ «Նիկոլ վարչապետ», այս տեքստն անընդհատ ինձ հետ էր, իմ մտքում էր: Ես մտածում էի հեղափոխության այն բանաձեւի մասին, որը գրվել է, եւ ես ի՞նչ պետք է անեմ այդ իրավիճակում: Անկեղծ ասած, իհարկե, մտածել եմ, որ այդ իրավիճակում, երբ արդեն առաջին փուլն ավարտված է, պետք է վերցնեմ իմ ուսապարկը եւ գնամ մեր տուն՝ ասելով, որ հեղափոխականի առաքելությունն ավարտված է: Բայց երբ ինձ հասկանալի է եղել՝ իսկ ի՞նչ տեղի կունենա հետո. Յայստանի վարչապետ կդառնա, որ ժողովուրդն ուղղակի կզգա իրեն, կներքեք այդ բառի համար, օգտագործված՝ ինչ-որ ուրիշ նպատակների համար: Մինչեւ հիմա էլ տուն գնալու ուսապարկն իմ ուսերին է, եւ միակ պատճառը, որ այդ սցենարը չի գործել, հետեւյալն է. ես հասկացա, որ մարդկանց մոտ կլինի շատ ավելի մեծ հիասթափություն եւ նույնիսկ զայրույթ, իրենց համար ի հայտ կգա առավել ծախված ընդդիմադիր գործչի կերպար, որն ընդամենը ներիշխանական ինտրիգների գործիք էր, դրանց ծառայեց եւ թողեց, գնաց իրենց տուն: Սա է այդ հարցի պատասխանը: Ես այդ մասին շատ երկար եմ մտածել, եւ քանի չեմ համոզվել այդ պատասխանի 100 տոկոսով ճշմարիտ լինելու մեջ, ինքս ինձ համաձայնություն չեմ տվել, որ ես պետք է լինեմ վարչապետի թեկնածու: Նիկոլ Փաշինյանի խոսքով՝



PRESS OFFICE OF THE GOVERNMENT OF ARMENIA

Այստեղ էթիկական հարց է առաջանում՝ որքանո՞վ է ճիշտ ուրիշ գրականությունից ներշնչվելով ինչ-որ տեքստ ստեղծել: Իրականում այդ հարցի պատասխանը ես գիտեի, որովհետեւ գրական մի ստեղծագործություն շատ մեծ տպավորություն էր ստեղծել, եւ շատ սիրում եմ այդ գործը՝ Խորխե Լուիս Բորխեսի «Պիեռ Մենարը՝ Դոն Կիխոտի» հեղինակ»-ը, որտեղ հերոսն ուղղակի նորից գրում է «Դոն Կիխոտը» եւ համոզված է, որ իր գրած «Դոն Կիխոտը» ոչ մի ընդհանրություն չունի Սերվանտեսի գրած «Դոն Կիխոտի» հետ: Այդ ասոցացիան կար, ես ինչ-որ առումով ինձ դնում էի Պիեռ Մենարի դիրքում, որը դառնում է «Դատավարության» հեղինակ, Նոդար Դունբաձեի վեպերի հեղինակ, Եզոպոսի առակի հեղինակ եւ բոլոր այդ հնարավոր ստեղծագործությունների հեղինակ:

Երբ ես դուրս եկա ընդհատակից, հետո բանտից, ողջ ընթացքում անընդհատ իմ օրակարգում եղել է գիրքը հրատարակելը: 2011 թ., երբ բանտից դուրս եկա, առաջին գործը, որ արեցի, մտածեցի, թե ինչպիսին պետք է լինի շապիկը: Այս լուսանկարը ես արել եմ 2011 թ.՝ բանտից դուրս գալուց մի քանի ամիս հետո: Չետո, երբ մտածում էի, որ գիրքը պետք է հրատարակել, այնպիսի զգացողություն պատեց ինձ, որ սա ընդամենը հողավածների շարք է եւ մեծամտանալ՝ գիրք տպելու աստիճան, այդքան էլ պատեհ չէ եւ այդպես մնաց: Եվ ահա, 2018 թվականին եւ այդ ժա-

ինձ հետ: Այդ ընթերցման արդյունքում էր, որ ծնվեց «Չար տնակի հեքիաթը»: Ինչո՞ւմ էր հեքիաթի իմաստը՝ կոնտեքստը նրանում է, որ կարծես թե Ազգային ժողովի շենքը, «Ելք» խմբակցության ղեկավարի աշխատասենյակը խժռել է բոլոր այն արժեքները, որոնք այստեղ նկարագրված են, այսինքն՝ կերել է իմ հիշողությունն այն իմաստով, որպեսզի չհիշեմ, թե որն է առաքելությունը, որն է այն խնդիրը, որը պետք է լուծվի:

Այս գրքի ընթերցումն էր, որ վերակենդանացրեց, այսինքն՝ որպես ինքս ինձ գրած նամակ օգնեց հասկանալ, որ այն չէ իմ գործը, երբ այս աշխատասենյակում մտածեցի պետք է լինեմ խմբակցության ղեկավար, ընդդիմադիր պատգամավոր, որը պետք է սուր ելույթներ ունենա եւ այլն, մի մասն ասի, որ հաստատ սա պայմանավորված է, թատրոն է խաղում, մյուս մասն ուրիշ բան ասի: Բայց պարզ էր, որ պետք է գործողություն: Եվ, իհարկե, այս գիրքը գործողության մղող հիմնական շարժառիթը դարձավ:

Այն միտքը, որ գրքում դրված բոլոր խնդիրները գործնականում լուծվող են, ինչ-որ առումով ճիշտ է՝ մի տարբերությամբ: Շատ հնարավոր է, որ այն, ինչ այստեղ գրված է, հնարավոր է՝ պարզվի, որ շարունակական է, երկրագնդի պտույտի մասն անընդհատ ուղեծիր ունի եւ այդ ուղեծրով պտտվում է: Ինչի՞ համար եմ ասում, որովհետեւ այս գրքում կա մի գլուխ՝ «Ի՞նչ է ամուսն այդ բանտապահը»: Այդ գլուխը նկարագրում է,



Համագործակցությամբ

Անվտանգ համացանցային միջավայր

Հաշվի առնելով հանրակրթության ոլորտում 37 կրթության և գիտության նախարարության և Ucom ընկերության երկարամյա և արդյունավետ համագործակցությունը, ինչպես նաև կարելի էր 37 հանրակրթական դպրոցներում աշակերտների համար կրթական առցանց ռեսուրսների մատչելիության, անվտանգ հասանելիության ապահովումն ու այդ ոլորտում կուտակված միջազգային դրական փորձն օգտագործելու համար նորագույն տեխնոլոգիաների կիրառման հրամայականը՝ կողմերն օրերս ազդարարել են նոր ծրագրի մեկնարկը: 37 կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանն ու Ucom ընկերության համահիմնադիր և գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը փոխըմբռնման հուշագիր են ստորագրել, որով կողմերը կգործակցեն հանրակրթական դպրոցների համակարգիչների համար անցանկալի կայքերի անհասանելիության ապահովման ծրագրի շրջանակում: Մասնավորապես՝ 37 կրթության և գիտության նախարարության թույլտվությամբ Ucom ընկերությունը համակարգչային անվտանգության ոլորտում բարձր վարկանիշ ունեցող «Մայքրոսեկ» ՍՊԸ-ի որակավորված մասնագետների օգնությամբ էլ ընկերության «DNS» սերվերի միջոցով կապահովի անցանկալի կայքերի հնարավորինս անհասանելիությունը դպրոցներում: Բացի այդ, Ucom ընկերությունը նշտապես կհետևի ծրագրի անխափան իրագործմանը և հնարավորինս սեղմ ժամկետներում կարծազանքի են համապատասխան միջոցներ կծեռնարկի նախարարության կողմից ծրագրի իրագործման ընթացքում հայտնաբերված թերությունների մասին իրազեկում ստանալու դեպքում: 37 կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանը



նշել է, որ Ucom ընկերության առաջարկով «Ապահով համացանց» շաբաթվա ընթացքում իրագործվել է փորձնական մի ծրագիր, որով ընկերությունը երեխաների համար համացանցն առավել անվտանգ դարձնելու շրջանակում տեխնիկական որոշակի միջոցառումներ է իրականացրել: «Այս հուշագրով փորձելու ենք դպրոցներում մեր երեխաներին գերծ պահել բռնություն, մեծահասակների համար բովանդակություն ստեղծող և վիրուսներ տարածող կայքերից: Անվտանգ համացանցային միջավայրի ապահովման համար փորձնական ծրագրից հետո կքննարկենք այն ընդլայնելու հարցը»,- նշել է նախարարը՝ ընդգծելով, որ սա ինտերնետի սահմանափակում չէ, այլ ընդամենը որոշակի տարիքային խմբերին համապատասխան բովանդակության տրամադրում: «Ucom-ը 37 կրթության և գիտության նախարարության հետ երկարամյա և արդյունավետ համագործակցության փորձ ունի, մասնավորապես՝ հանրակրթության ոլորտում: Մեր ընկերությունը մշտապես եղել է ինտերնետի ազատ

և միևնույն ժամանակ անվտանգ օգտագործման ջատագովը: Որպես պատասխանատու ընկերություն՝ մենք օժանդակում ենք ծնողներին սահմանափակել իրենց անչափահաս երեխաների մուտքն ինտերնետ և գերծ պահել նրանց բռնություն կամ մեղքություն պարունակող բովանդակություն դիտելուց: Նաև համալիր լուծումներ ենք առաջարկում մեծահասակների համար նախատեսված բովանդակության արգելափակման համար և ինտերնետից ներթափանցող վիրուսների դեմ: 37 ԿԳՆ-ի հետ այս համագործակցությունը, անշուշտ, ավելացնում է պատասխանատվությունը բոլոր դպրոցականների նկատմամբ»,- նշել է Ucom ընկերության համահիմնադիր և գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը՝ վստահություն հայտնելով, որ հաջորդ տարի ծրագրի արդյունքներն ավելի շոշափելի կլինեն և կընդլայնեն իրենց աշխարհագրությունը: Նա ես մեկ անգամ շեշտել է, այն ինտերնետ ծառայությունը, որը հասանելի է Ucom միջոցով, ամբողջությամբ ֆիլտրված է լինելու՝ համաձայն 37 օրենսդրության:

Աշխարհի հետ

Չարգացման կենտրոններ Մասիսում

Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջում բացվել է զարգացման երկու կենտրոն, որոնց նպատակն է բարելավել 17-20 տարեկան երիտասարդների անգլերենի և աշխատանքային հիմնարար հմտությունները: Բրիտանական խորհրդի կողմից իրականացվող և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ֆինանսավորմամբ ծրագրի շրջանակում նախատեսվում է միջին մասնագիտական կրթական հաստատությունների ուսանողներին լրացուցիչ դասընթացների միջոցով աջակցել աշխատաշուկա մուտք գործելու և աշխատանքային ոլորտի կարելիություն հմտությունների, այդ թվում՝ անգլերենի իմացության բարելավման հարցում:

Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջում բացվել է զարգացման երկու կենտրոն, որոնց նպատակն է բարելավել 17-20 տարեկան երիտասարդների անգլերենի և աշխատանքային հիմնարար հմտությունները: Բրիտանական խորհրդի կողմից իրականացվող և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ֆինանսավորմամբ ծրագրի շրջանակում նախատեսվում է միջին մասնագիտական կրթական հաստատությունների ուսանողներին լրացուցիչ դասընթացների միջոցով աջակցել աշխատաշուկա մուտք գործելու և աշխատանքային ոլորտի կարելիություն հմտությունների, այդ թվում՝ անգլերենի իմացության բարելավման հարցում:

Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջում բացվել է զարգացման երկու կենտրոն, որոնց նպատակն է բարելավել 17-20 տարեկան երիտասարդների անգլերենի և աշխատանքային հիմնարար հմտությունները: Բրիտանական խորհրդի կողմից իրականացվող և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ֆինանսավորմամբ ծրագրի շրջանակում նախատեսվում է միջին մասնագիտական կրթական հաստատությունների ուսանողներին լրացուցիչ դասընթացների միջոցով աջակցել աշխատաշուկա մուտք գործելու և աշխատանքային ոլորտի կարելիություն հմտությունների, այդ թվում՝ անգլերենի իմացության բարելավման հարցում:

Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջում բացվել է զարգացման երկու կենտրոն, որոնց նպատակն է բարելավել 17-20 տարեկան երիտասարդների անգլերենի և աշխատանքային հիմնարար հմտությունները: Բրիտանական խորհրդի կողմից իրականացվող և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ֆինանսավորմամբ ծրագրի շրջանակում նախատեսվում է միջին մասնագիտական կրթական հաստատությունների ուսանողներին լրացուցիչ դասընթացների միջոցով աջակցել աշխատաշուկա մուտք գործելու և աշխատանքային ոլորտի կարելիություն հմտությունների, այդ թվում՝ անգլերենի իմացության բարելավման հարցում:



Նշենք, որ ծրագրի ֆինանսավորմանը զուգահեռ՝ HSBC Հայաստանն իր վրա էր վերցրել Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջի երկու դասասենյակի հիմնովին վերանորոգման ծախսերը:

Ֆիլեցնենք, որ ծրագիրն իրականացվում է 37 Արարատի մարզի Արտաշատ և Մասիս քաղաքների երկու միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում:

«Անգլերենը և աշխատանքային հմտությունները կարիերայի զարգացման համար» ծրագրի շրջանակում մասնակիցներին կտրվի նաև ստաժավորման և աշխատանքի հնարավորություն գործընկեր կազմակերպություններում:

Անգլերենի ակումբ՝ Բերդ քաղաքի ավագ դպրոցում

«Բարելավելով հմտությունները՝ հանուն ավելի ուժեղ հասարակության» ծրագրի շրջանակում Տավուշի մարզի Բերդ քաղաքի ավագ դպրոցում բացվել է անգլերենի ակումբ, որտեղ, ընդհանուր առմամբ, կհաճախի 60 աշակերտ: Ծրագիրը, որի շրջանակում ամբողջապես վերանորոգվել և կահավորվել է երկու դասասենյակ, իրականացնում է Հայաստանում Բրիտանական խորհրդից, Միացյալ Թագավորության կառավարության ֆինանսավորմամբ և 37 կրթության և գիտության նախարարության աջակցությամբ: Բացման հանդիսավոր միջոցառմանը ներկա էին 37 ԿԳ փոխնախարար Արեւիկ Անափիոսյանը, Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Արեւիկ Սարիբեկյանը, Տավուշի փոխմարզպետը: 37 կրթության և գիտության նախարարի տեղակալ Արեւիկ Անափիոսյանը շնորհավորել է ներկայից Բերդում անգլերենի ակումբ բացելու կապակցությամբ: «Ոգեւորված ենք անգլերենի ակումբների բացմամբ և ընդլայնմամբ: Շատ ուրախ ենք, որ այս հեռավոր ու գողորհիկ բնակավայրում այսօր բացվում է անգլերենի ակումբ, որովհետեւ այն աշակերտներին և անգլերեն դասավանդող ուսուցիչներին հնարավորություն կտա ոչ թե լքել Բերդը, այլ այն շենացնել: Բոլորս հասկանում ենք, որ այսօր լեզուն ոչ թե նպատակ է, այլ գործիք, որի միջոցով մենք առավել զարգացնում ենք գիտելիքները, ձեռքբերում նոր հմտություններ՝ դրանցով մեր ընտանիքի, հարազատներին, մեր բնակավայրի, մարզի և պետության համար դառնալով կարելի մարդ և զարգացնելով այն: Հետաքրքիր է նաև, որ ակումբների շրջանակում դասավանդվում է ոչ թե լեզու, այլ հմտություն»,- նշել է Արեւիկ Անափիոսյանը՝ այս համատեքստում կարելիություն բանակցային հմտությունները: Փոխնախարարը բարձր է գնահատել նաև Բրիտանական խորհրդի կողմից իրականացվող վերապատրաստումները: «Ուրախ ենք, որ վերապատրաստումները սահմանափակվում են ոչ թե կարճ դասընթացներով, այլ ամբողջատ աշխատանք է տարվում ուսուցիչների հետ: Բարեփոխումների ճանապարհին մենք ունենք երեք կարելի գործընկեր՝ աշակերտը, որը պետք է գիտակցի գիտելիքի կարելիությունը: Մեր մյուս գործընկերները ծնողներն են, որոնք պետք է ծիշտ կամուրջ ստեղծեն ուսուցիչի և աշակերտի միջև: Եվ, իհարկե, շատ կարելի են ուսուցիչները և դպրոցի ղեկավար անձնակազմը՝ առանց որոնց հետ համագործակցելու և նրանց կարելիություն ընդգծելու, որեւէ բարեփոխում իրականություն

ընդ, այլ այն շենացնել: Բոլորս հասկանում ենք, որ այսօր լեզուն ոչ թե նպատակ է, այլ գործիք, որի միջոցով մենք առավել զարգացնում ենք գիտելիքները, ձեռքբերում նոր հմտություններ՝ դրանցով մեր ընտանիքի, հարազատներին, մեր բնակավայրի, մարզի և պետության համար դառնալով կարելի մարդ և զարգացնելով այն: Հետաքրքիր է նաև, որ ակումբների շրջանակում դասավանդվում է ոչ թե լեզու, այլ հմտություն»,- նշել է Արեւիկ Անափիոսյանը՝ այս համատեքստում կարելիություն բանակցային հմտությունները: Փոխնախարարը բարձր է գնահատել նաև Բրիտանական խորհրդի կողմից իրականացվող վերապատրաստումները: «Ուրախ ենք, որ վերապատրաստումները սահմանափակվում են ոչ թե կարճ դասընթացներով, այլ ամբողջատ աշխատանք է տարվում ուսուցիչների հետ: Բարեփոխումների ճանապարհին մենք ունենք երեք կարելի գործընկեր՝ աշակերտը, որը պետք է գիտակցի գիտելիքի կարելիությունը: Մեր մյուս գործընկերները ծնողներն են, որոնք պետք է ծիշտ կամուրջ ստեղծեն ուսուցիչի և աշակերտի միջև: Եվ, իհարկե, շատ կարելի են ուսուցիչները և դպրոցի ղեկավար անձնակազմը՝ առանց որոնց հետ համագործակցելու և նրանց կարելիություն ընդգծելու, որեւէ բարեփոխում իրականություն



չի դառնա: Կարծում ենք, որ այս անգլերենի ակումբը կդառնա փոքրիկ, բայց տարածվող լույս՝ դպրոցի և Բերդի կյանքում և կընդգրկի ոչ միայն այս, այլ հարեւան բնակավայրերի բնակչությանը: Ձեր համայնքը կկարողանա ապացուցել, որ իսկապես պետք է տալ մի փոքրիկ շիվ, որը մեր սիրտ և ջերմության միջոցով հնարավոր է դարձնել մեծ ծառ»,- ընդգծել է փոխնախարարը: Միջոցառման մասնակիցներին ողջունել է նաև Բրիտանական խորհրդի տնօրեն Արեւիկ Սարիբեկյանը՝ ընդգծելով, որ ծրագրի շրջանակում բացմաթիվ ակումբեր են բացվել 37 տարբեր մարզերում: «Ես

շատ հուզված եմ և ոգեւորված՝ տեսնելով ինչպիսի պայծառ երիտասարդություն և ապագա ունենք: Բերդն ամենահեռավոր քաղաքն է Տավուշում, որտեղ մենք բացում ենք անգլերենի ակումբ, և որին մենք անհամբեր սպասում էինք: Հենու բնակավայրերում, որտեղ բացվում են այս ակումբները, առավել ակնհաս է դառնում դրանց անհրաժեշտությունը: Այստեղ ավելի մեծ է ցանկությունը սովորելու, նոր գիտելիքներ ու հմտություններ ձեռքբերելու, որը մենք սիրով տրամադրում ենք»,- մասնավորապես նշել է նա: Նշենք, որ ծրագիրը նախատեսվում է աջակցել հեռավոր համայնք-

ներում երիտասարդների անգլերենի, ինչպես նաև բանակցելու և երկխոսելու հմտությունների զարգացմանը, նպաստել նրանց աշխատանք գտնելու հեռանկարներին իրենց համայնքներում: Հայաստանում ծրագրի ներկա փուլը նախատեսում է անգլերենի ակումբների ստեղծում Ջերմուկ, Վայք և Բերդ քաղաքների ավագ դպրոցներում: Անգլերենի ակումբները համալրված են անհրաժեշտ ուսումնական, դասավանդման ռեսուրսներով և համակարգչային տեխնիկայով: Բացի այդ, կիրառվում է նորագույն տեխնոլոգիա, որը հնարավորություն է ընձեռում ուսուցիչներին ձայնագրել (տեսանկարահանել) իրենց դասընթացները և Բրիտանական խորհրդի մասնագետների կողմից կարծիք ստանալ դրանց վերաբերյալ:

Դասընթացները կվարեն վերապատրաստում անցած ուսուցիչները, որոնք կստեղծեն սովորելու արդյունավետությանը նպաստող, 21-րդ դարի կրթական պահանջներին համապատասխան միջավայր: Անգլերենի ակումբներն աշակերտներին կառաջարկեն հետեյալ անվճար արտադասարանային պարապմունքները՝ անգլերենը հաղորդակցության համար, ինչպես նաև քննարկելու, բանակցելու և երկխոսելու հմտությունների դասընթաց:


Միջոցառման մասնակիցներին ողջունել է նաև Բրիտանական խորհրդի տնօրեն Արեւիկ Սարիբեկյանը՝ ընդգծելով, որ ծրագրի շրջանակում բացմաթիվ ակումբեր են բացվել 37 տարբեր մարզերում: «Ես

շատ հուզված եմ և ոգեւորված՝ տեսնելով ինչպիսի պայծառ երիտասարդություն և ապագա ունենք: Բերդն ամենահեռավոր քաղաքն է Տավուշում, որտեղ մենք բացում ենք անգլերենի ակումբ, և որին մենք անհամբեր սպասում էինք: Հենու բնակավայրերում, որտեղ բացվում են այս ակումբները, առավել ակնհաս է դառնում դրանց անհրաժեշտությունը: Այստեղ ավելի մեծ է ցանկությունը սովորելու, նոր գիտելիքներ ու հմտություններ ձեռքբերելու, որը մենք սիրով տրամադրում ենք»,- մասնավորապես նշել է նա: Նշենք, որ ծրագիրը նախատեսվում է աջակցել հեռավոր համայնք-

ներում երիտասարդների անգլերենի, ինչպես նաև բանակցելու և երկխոսելու հմտությունների զարգացմանը, նպաստել նրանց աշխատանք գտնելու հեռանկարներին իրենց համայնքներում: Հայաստանում ծրագրի ներկա փուլը նախատեսում է անգլերենի ակումբների ստեղծում Ջերմուկ, Վայք և Բերդ քաղաքների ավագ դպրոցներում: Անգլերենի ակումբները համալրված են անհրաժեշտ ուսումնական, դասավանդման ռեսուրսներով և համակարգչային տեխնիկայով: Բացի այդ, կիրառվում է նորագույն տեխնոլոգիա, որը հնարավորություն է ընձեռում ուսուցիչներին ձայնագրել (տեսանկարահանել) իրենց դասընթացները և Բրիտանական խորհրդի մասնագետների կողմից կարծիք ստանալ դրանց վերաբերյալ:

Դասընթացները կվարեն վերապատրաստում անցած ուսուցիչները, որոնք կստեղծեն սովորելու արդյունավետությանը նպաստող, 21-րդ դարի կրթական պահանջներին համապատասխան միջավայր: Անգլերենի ակումբներն աշակերտներին կառաջարկեն հետեյալ անվճար արտադասարանային պարապմունքները՝ անգլերենը հաղորդակցության համար, ինչպես նաև քննարկելու, բանակցելու և երկխոսելու հմտությունների դասընթաց:

Հեղինակ՝ ՅՈՒՆԱՆԻՍՅԱՆ



### Հայոց լեռներում

Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր,  
Ու մենք անհատնում  
Էն անլույս մըթնում  
Երկա՛ր դարերով գընում ենք դեպ վեր  
Հայոց լեռներում,  
Դըժար լեռներում:

Տանում ենք հընուց մեր գանձերն անգին,  
Մեր գանձերը ծով,  
Ինչ որ դարերով  
Երկնել է, ծընել մեր խորունկ հոգին  
Հայոց լեռներում,  
Բարձր լեռներում:

Բայց քանի անգամ շեկ անապատի  
Օրդունները սել  
Իրարու ետել  
Եկա՛ն, զարկեցին մեր քարվանս ազնիվ  
Հայոց լեռներում,  
Արնոտ լեռներում:

Ու մեր քարվանս շըփոթ, սուկահար,  
Թալանված, ջարդված  
Ու հատված-հատված  
Տանում է իրեն վերքերն անհամար  
Հայոց լեռներում,  
Սուգի լեռներում:

Ու մեր աչքերը նայում են կարոտ՝  
Հեռու աստղերին,  
Երկընթի ծերին,  
Թե երբ կըբացվի պայծառ առավոտ՝  
Հայոց լեռներում,  
Կանաչ լեռներում:

\* \* \*

Թեպետե՛ր բախտը մեզ շատ հարվածեց  
Երկար դարերով, ահեղ հարվածով,  
Թեպետե՛ր էսպես ցրվեց, տարածեց,  
Ձրգեց հողեհող, փրռեց ծովեծով,

Վկա է սակայն բովանդակ երկիր,  
Որ մենք կարեվեր ապրում ենք կրկին,  
Եվ ուր հասնում է հայի գիրքն ու գիր –  
Կենդանի է դեռ հայության ոգին:

Եվ թարմ աղմուկով մանկունք մեր մատաղ  
Առաջ են խաղում լուսավոր տենչով,  
Եվ թնդում են դեռ հայի երգն ու տաղ  
Հարազատ լեզվով, հայրենի շընչով:

Եվ իր փըլատակ տըների տակից  
Ելնում է ահա հզոր ժողովուրդ,  
Իր վեհ ճակատին տանջանք ու թախիծ,  
Խորունկ հայացքում մեծ կյանքի խորհուրդ:

Ո՛վ դուք, սրբազան Մասիս, Արագած,  
Էդ ձեր երկնամուխ գոհար թագերով,  
Եվ որ նրանցից վերել խոյացած  
Փայլատակում եք լույս – պըսակներով –

Սահակ ու Մեսրոպ, եւ շատ պանծալիք,  
Որ լըցրիք Հայոց աշխարհքն ու սրտեր  
Լուսավոր կյանքի սիրով երջանիկ  
Ու ձրգտում տըվիք – ձրգտել դեպի վեր,

Քանի որ դուք կաք, քանի կըմնաք,  
Հոյակապ այուներ հայության ոգու,  
Մենք միշտ անսասան առաջ տի զնանք,  
Ինչքան մեր ճամփան լինի ահարկու:

Եվ տոն կըտոնենք էսպես խնդագին,  
Եվ թող իմանա բովանդակ երկիր –  
Ապրում է անմեռ հայությունը հին,  
Ապրում են անմահ իրեն գիրքն ու գիր:

### Հայոց վիշտը

Հայոց վիշտը անհուն մի ծով,  
Խավար մի ծով ահագին,  
Էն սել ծովում տառապելով,  
Լող է տալիս իմ հոգին:

Մերք զայրացկոտ ծառս է լինում  
Մինչե՛ր երկից կապուտակ,  
Ու մերք հոգնած սուգվում, իջնում  
Դեպի խորքերն անհատակ:

Ոչ հատակն է գտնում անվերջ  
Ու ոչ հասնում երկնքին...  
Հայոց վշտի մեծ ծովի մեջ  
Տառապում է իմ հոգին:



### Մեր ուխտը

Մենք ուխտ ունենք՝ միշտ դեպի լույս, Ու գընում ենք մեր ճամփով, Մըրրիկներով	Ու թեպետե՛ր պատառ-պատառ Մեր դըրոշը սըրբազան, Ու մենք չունենք տեղ ու դադար՝ Երկրից երկիր ցիրուցան:
Մենք անցել ենք արյան ծովեր, Սուր ենք տեսել ու կըրակ, Մեր ճակատը դեմ ենք արել Մըրրիկներին հակառակ:	Բայց գընում ենք մենք անվեհեր Չարկերի տակ չար բախտի, Մեր աչքերը միշտ դեպի վեր՝ Դեպի լույսը մեր ուխտի:



### Հայրենիքիս հետ

Վաղուց թե՛ս իմ հայացքը անհայտին է ու հեռվում  
Ու իմ սիրտը իմ մըտքի հետ անհուններն է թափառում,  
Բայց՝ կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝  
Մըղկըտում է սիրտըս անվերջ քո թառանչից աղեկեզ,  
Ու զաղթական գավակներիդ լուս շարքերից ուժասպառ,  
Ե՛վ գյուղերից, ե՛լ՝ շեներից՝ տըխ՝ ր, դատարկ ու խավար,  
Չարկվա՛ծ հայրենիք,  
Չըրկվա՛ծ հայրենիք:

Խըռընվում են մըտքիս հանդեպ բանակները անհամար,  
Տըրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,  
Ու ջարդարար ոհմակները աղաղակով վայրենի,  
Ավարներով, ավերներով, խընջույքներով արյունի,  
Որ դարձըրին քեզ մըշտական սել ու սուգի մի հովիտ,  
Խեղճ ու լալկան քո երգերով, հայացքներով անժըպիտ,  
Ողբի՛ հայրենիք,  
Որբի՛ հայրենիք:

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,  
Կանգնած խոհ՝ ւն, խորհըրդավոր ճամփին նորի ու հընի.  
Հառաչանքով սըրտի խորքից խոսք ես խոսում Աստու՛ ու հետ  
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղետ,  
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհքին  
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձրգտում է մեր հոգին.  
Հույսի՛ հայրենիք,  
Լույսի՛ հայրենիք:

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,  
Հագա՛ր-հագար լուսապայծառ հոգիներով ճառագած,  
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,  
Կենսաժըպիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին,  
Ու պոետներ, որ չեն պըղծել իրենց շուրթերն անեծքով,  
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,  
Իմ նո՛ր հայրենիք,  
Հըզո՛ր հայրենիք...



## Թմկաբերդի առումը

### Նախերգանք

Յե՛յ, պարոննե՛ր, ականջ արեք  
Թափառական աշուղին,  
Սիրո՛ւն տիկնայք, ջահե՛լ տղերք,  
Լա՛վ ուշ դըրեք իմ խաղին:

Մենք ամենքսս հյուր ենք կյանքում  
Մեր ծնընդյան փուչ օրից,  
Յերթով գալիս, անց ենք կենում  
Ես անցավոր աշխարհից:

Անց են կենում սեր ու խընդում,  
Գեղեցկություն, գանձ ու գահ,  
Մահը մերն է, մենք մահինը,  
Մարդու գործն է միշտ անմահ:

Գործն է անմահ, լա՛վ իմացեք,  
Որ խոսվում է դարեդար,  
Երնե՛կ նըրան, որ իր գործով  
Կապրի անվերջ, անդադար:

Չարն էլ է միշտ ապրում անմեռ,  
Անե՛ծք նըրա չար գործքին,  
Որդիդ լինի, թե հերն ու մեր,  
Թե մուրագով սիրած կին:

Ես լավության խոսքն եմ ասում,  
Որ ժըպտում է մեր սըրտին,  
Ո՞վ չի սիրում, թեկուզ դուշման,  
Լավ արարքը, լավ մարդին:

Է՛յ, լա՛վ կենաք, ականջ արեք,  
Մի բան պատմեն հիմի ձեզ,  
Խոսքս, տեսեք, ո՞ւր է գընում,  
Քաջ որսկանի գյուլի պես:

## Լոռեցի Սարնս (սկիզբը)


Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց  
Ժայռերը՝ խորունկ նոթերը կիտած՝  
Դեմ ու դեմ կանգնած, համառ ու անթարթ  
Յայացքով իրար նայում են հանդարտ:

Նըրանց ոտքերում՝ գազազած գալի՝  
Գալարվում է գիծ Դև-Քեղը մուլի,  
Խելագար թռչում քարերի գըլխով,  
Փըրփուր է թըքում անգուսպ երախով,  
Թըքում ու զարկում ժեռուտ ավերին,  
Փընտրում է ծաղկած ավերը հին-հին,  
Ու գոռում գիծ-գիծ.  
- Վա՛շ-վի՛շ, վա՛շ-վի՛շ...

Մութ անձավներից, հազար ձևերով,  
Քաջքերն անհանգիստ՝ հըտախտ  
ձայներով  
Դևի հառաչքին արծազանք տալի,  
Ծաղրում են նըրա գոռոցն ահռելի  
Ու կըրկնում են գիծ-գիծ.  
- Վա՛շ-վի՛շ, վա՛շ-վի՛շ...

Գիշերը լուսնի երկչոտ շողերը  
Յենց որ մըտնում են էն խավար ձորը՝  
Ալիքների հետ խաղում դողալով,  
Անհայտ ու մռայլ մի կյանքի գալով՝  
Ոգի է առնում ամեն բան էնտեղ,  
Շընչում է, ապրում և մութն և ահեղ:

Ես տախտի վըրա աղոթում մի վանք:  
Էն ժայռի գըլխին հըսկում է մի քերդ,  
Մութ աշտարակից, ինչպես զարհուրանք,  
Բուի կըռինչն է տարածվում մերթ-մերթ,  
Իսկ քարի գլխից, լուռ մարդու նման,  
Նայում է ձորին մի հին խաչարձան:



## Սարնս (սկիզբը)

Մեր գյուղն էն է, որ հըպարտ,  
Լեռների մեջ միգապատ,  
Խոր ձորերի քարափին՝  
Չեղ տըված ծակատին՝  
Միտք է անում տըխրաղեմ.  
Ի՛նչ է ուզում՝ չըգիտեմ...

Ժամ ենք գնում ամեն օր.  
Բայց միշտ ցավեր նորանոր,  
Միշտ մի աղետ, մի վընաս  
Գալիս են մեզ անպակաս:

Պաս չենք էնտեղ մենք ուտում,  
Ու ջերմեռանդ աղոթում,

Ահա պատմեն ձեզ մի դեպք,  
Մի պատմություն, որ երբեք  
Յիշատակով տըխրալի  
Սըրտիս հանգիստ չի տալի:



## Լուսավորչի կանթեղ

Կես գիշերին կանթեղը վառ  
Կախ է ընկած երկընթից,  
Լուսավորչի կանթեղն անմար  
Յայոց մըթնած երկընթից:

Եվ ոչ քամին կըհանգընի՝  
Վիշապ-քամին ահագին:

Կախ է ընկած առանց պարան  
Արագածի կատարին,  
Ու սեղանից հըսկայական  
Լույս է տալիս աշխարհին:

Երբ պատում է մութ խավարը  
Չընաշխարհիկ մեր երկրին,  
Երբ տիրում է ահն ու վախը  
Թույլ, կասկածոտ սըրտերին,

Լույս է տալիս երկա՛ր դարեր  
Ու վառվում են միշտ անշեջ  
Սուրբի մաքուր արցունքները  
Յուղի տեղակ նըրա մեջ:

Ով անմեղ է, լիքը սիրով  
Ու հավատով անսասան,  
Ով նայում է վառ հույսերով  
Դեպի Յայոց ապագան,-

Ոչ մարդկային ձեռ կըհասնի  
Էն ահավոր բարձուների,

Նա կըտեսնի էն մըշտավառ  
Ջահը կախված երկընթից,  
Ասես՝ աստժո աչքը պայծառ  
Յըսկում է ցած երկընթից:

## Անուշ

### Նախերգանք

(Յամբարձման գիշերը)

Բազմած լուսնի նուրբ շողերին,  
Յովի թևին՝ թըռչելով՝  
Փերինները սարի գըլխին  
Յավաքվեցին գիշերով:

— Եկե՛ք, քույրե՛ր, սեզ սարերի  
Չըքնաղագեղ ոգիներ,  
Եկե՛ք, ջահել սիրահարի  
Սերը ողբանք վաղամեռ:

Օխտն աղբյուրից ջուր է առել  
Կույս սափորով, լուռ ու մունջ,  
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,  
Կապել սիրո ծաղկեփունջ:

Ջուրն ու ծաղիկ աստղունք դըրել,  
Խընդիրք արել աստղերին,  
Փափագ սըրտով խընդիրք արել՝  
Բարի ժըպտան իր սերին...

Ափսո՛ս, Անո՛ւշ, սարի ծաղիկ,  
Ափսո՛ս իգիթ քու յարին.  
Ափսո՛ս բոյիդ թելիկ-մեղիկ,  
Ափսո՛ս էդ ծով աչքերին...:

Ու նըրանց հետ՝ ցող-արցունքով  
Լըցված սըրտերն ու աչեր՝  
Սարի ծաղկունք տըխուր սյուքով  
Յառաչեցին էն գիշեր:

— Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛կ,  
Վո՛ւշ քու սերին, քու յարին...  
Վուշ-վո՛ւշ, Սարո՛ւ, վուշ-վո՛ւշ, իգի՛թ,  
Վո՛ւշ քու սիրած սարերին...

— Եկե՛ք, քույրե՛ր, սեզ սարերի  
Չըքնաղագեղ ոգիներ...  
Ու փերիններն էսպես տըխուր  
Երգում էին ողջ գիշեր:

Կանչում էին հըրաշալի  
Յընչյուններով դյութական,  
Ու հենց շողաց ցուլքն արևի՝  
Անտես, անհետ չըքացան:

Խոր սուզվեցին ական աղբյուրի,  
Մըտան կաղնին հաստաբուն,  
Ու լեռնային վըտակների  
Ալիքները պաղպաջուն:



Մայրենի լեզվի օրվա առթիվ

Ընդլայնված եւ կառուցողական քննարկում

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի է ունեցել Մայրենիի օրվան նվիրված խորհրդակցություն, որին մասնակցել են ինստիտուտի անվանի լեզվաբանները, երիտասարդ գիտաշխատողները, Կրթության եւ գիտության նախարարության եւ Լեզվի կոմիտեի ներկայացուցիչներ: Քննարկվել են լեզվապահպանության, լեզվի ուսուցման, կանոնակարգման, զարգացման, լեզվամշակույթի եւ լեզվաքաղաքականությանը վերաբերող հարցեր:

ՀՀ ԿԳ նախարարության Լեզվի կոմիտեի նախագահ **Դավիթ Գյուրջինյանը**, շնորհավորելով Մայրենիի օրը, նշել է, որ կառավարության կողմից հաստատված նոր ծրագրում լեզվաքաղաքականության մասին կարելու երկու կետ կա. «Առաջին՝ ստեղծել անհրաժեշտ պայմաններ հայերենի՝ իբրեւ ժամանակակից գիտության լեզվի գործառնության ու զարգացման համար:

Երկրորդ՝ ապահովել հայերենի գործառնությունն իբրեւ ժամանակակից գիտության լեզու, երկրորդ՝ հրաժարվել հեռուստատեսային ցածրորակ արտադրանքից, ինչպես նաեւ ապահովել մանուկների համար համապատասխան



ֆիլմերի քարգնամություն»,- նշել է կոմիտեի նախագահը եւ հավելել, որ կան նաեւ մի շարք դրական նախաձեռնություններ. «Սենք վերջերս, համագործակցելով հասարակական կազմակերպության հետ, համացանցում ներմուծել ենք «հայ» հասցեն: Կրթության եւ գիտության նախարարը, կարելու լով խնդիրը, ներկայացրեց կառավարություն եւ հարցը լուծում ստացավ: Պետական բոլոր մարմիններին հանձնարարվել է իրենց համացանցային հասցեների վեր-

ջում ավելացնել նաեւ «հայ» վերջավորությունը»,- նշել է Դ. Գյուրջինյանը: Բացի այդ՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության հետ պայմանավորվածություն է ձեռքբերվել լեզվի խնդիրներին նվիրված հաղորդումներ թողարկելու վերաբերյալ: Այս հարցում ակնկալվում է մասնագետների աջակցությունը: Գյուրջինյանի խոսքով՝ վերջերս Երեւանի տարածաշրջանային թիվ 1 թղթի մի խումբ ուսանողներ սեփական նախաձեռնությամբ հայերեն թարգ-

մանել եւ հնչունավորել են «Սանտայի գաղտնի գործակալներ» մուլտֆիլմը, որը հասանելի է համացանցում: Նախատեսվում է իրականացնել նաեւ «Համահայկական թելադրություն» նախաձեռնությունը: «Ընդհանրապես ցանկացած մեծ խնդրի լուծում փոքր քայլերից է սկսվում: Սենք՝ լեզվի մասնագետներս ստեղծել ենք փակ համարակարգ. մենք մեր մեջ խոսում ենք, օրինակներ ենք բերում, իսկ հարցերը մնում են չլուծված: Եկեք ընդունենք, որ միայն

հորդորակներ հղելը բավարար չէ: Սենք պետք է նախաձեռնող լինենք. Լեզվի պետական կոմիտեն սպասում է մասնագիտական ներուժի աջակցությանը»,- նշել է Դավիթ Գյուրջինյանը:

Ելույթ են ունեցել նաեւ ՀՀ ԳԱԱ հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար **Յուրի Սուվարյանը**, ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտի տնօրեն **Վիկտոր Կատվալյանը**, ԳԱԱ թղթակից անդամներ **Լ. Հովհաննիսյանը** եւ **Ա. Դուրխանյանը**: Անդրադառնալով հայերենի պահպանության խնդիրներին՝ նա նշել է, որ Լեզվի ինստիտուտում ընթանում են գիտական քննարկումներ, որոնք բաց են մասնագետների համար: Նպատակը լեզվաքաղաքականության վերաբերյալ հստակ առաջարկություններ ձեւավորելն է:

Խորհրդակցության մասնակիցները ներկայացրել են մի շարք մտահոգություններ՝ հրապարակային խոսքի, մասնավորապես, հեռուստատեսության կտրուկ ակտիվիզմի, իրավապահ ակտիվիզմի եւ պաշտոնական տերմինների լեզվի վերաբերյալ: Որպես մտահոգություն նշվել է՝ Հայերենի բարձրագույն խորհրդի վերստեղծման եւ արդյունավետ գործունեության հարցը:

Կառավարության ծրագիր

Կրթության խնդիրներն ու առաջարկվող լուծումները

Հոդված 3 ակունքում քննարկվել է ՀՀ կառավարության ծրագրի՝ կրթության եւ գիտության ոլորտին վերաբերող հատվածը՝ «Կրթության խնդիրներն ու առաջարկվող լուծումները» խորագրով: Հիմնական բանախոսներից ԿԳՆ զարգացման ծրագրերի եւ մոնիթորինգի վարչության պետ **Ռոբերտ Ստեփանյանը** ներկայացրել է ոլորտի զարգացման հիմնական ուղղություններն ու դրանց արտացոլումն Ազգային ժողովում քննարկվող ծրագրում. «Առաջին կարելու խնդիրը կրթության բոլոր մակարդակներում բովանդակության արդիականացումն է: Սենք պետք է կրթությունը համապատասխանեցնենք արդի չափանիշներին, նկատի ունենալով, որ արագ փոփոխվող աշխարհում կրթության համակարգի առջեւ զնալով ավելի մեծ պահանջներ են դրվում: Ժամանակակից կրթությունը պետք է լինի դինամիկ, ճկուն եւ հնավորություն տա շատ արագ հարմարվել տնտեսության, աշխատաշուկայի եւ հասարակության պահանջներին: Հաջորդ կարելու խնդիրը դասավանդող անձնակազմին որակավորման ու սոցիալական պաշտպանվածության բարելավումն է: Երրորդը՝ ապահովել կայուն ինստիտուցիոնալ համակարգերի (չենքային պայմաններ, կրթական միջավայր), ինչպես նաեւ կրթություն-գիտություն-տնտեսություն կապի ապահովումն է: Մասնավորապես՝ գիտությունը եւ տնտեսությունը պետք է որոշակի մասնակցություն ունենան կրթական քաղաքականության մշակման եւ



իրականացման գործում»,- նշել է Ռոբերտ Ստեփանյանը: Խոսելով ոլորտային առաջնահերթություններից՝ ԿԳՆ զարգացման ծրագրերի եւ մոնիթորինգի վարչության պետը նշել է, որ նախադպրոցական կրթության համակարգը մատչելիության առումով այսօր խոցելի է եւ այդ նկատառումով նպատակ է դրված 3-5 տարեկան երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում հասցնել 70 տոկոսի: «Ընդգրկվածության 70 տոկոս ցուցանիշը բավականին ամբիցող նպատակ է՝ հաշվի առնելով, որ նախկին ծրագրով մենք թիրախային ենք համարել 5 տարեկանների ընդգրկվածության ապահովումը: Այժմ մենք տարիքային շեմը իջեցրել ենք: Սենք ունենք համայնքներ, որտեղ ընդհանրապես նախադպրոցական հաստատու-

թյուններ չկան: Խնդրի լուծման նպատակով ԿԳ նախարարության կողմից մշակվել են նախակրթարանների ծախսարդյունավետ մոդելներ՝ փոքր համակազմ ունեցող համայնքների համար: Սա օգտակար կլինի նաեւ համայնքների համար, քանի որ նախադպրոցական կրթության, այսինքն մանկապարտեզների գործունեության ապահովումը համայնքների պարտականությունն է: Իսկ հատկապես գյուղական համայնքները դասական իմաստով մանկապարտեզի բեռն իրենց վրա վերցնելու հնարավորություն չունեն»,- նշել է Ռոբերտ Ստեփանյանը: Նրա խոսքով՝ կրթության որակի եւ մատչելիության տեսանկյունից կարելու խնդիր է նաեւ փոքր համակազմ ունեցող գյուղական դպրոցների հարցը, որտեղ սովորում են 100-ից, իսկ որոշ դեպքերում նաեւ 50-

ից պակաս աշակերտներ: Նման դպրոցներում պետությունը մեկ աշակերտի վրա ծախսում է ավելի լուրջ ռեսուրսներ: Սենք քաղաքների համեմատությամբ մի քանի անգամ ավելի բարձր է ծախսը, մինչդեռ դրան համարժեք որակ չի ստանում: Նպատակ է դրված ուսուցման տարբեր մեթոդների համադրմամբ հասնել որակի բարելավման: Շարունակական ծրագրերից կարելու է անցումը համընդհանուր ներառման, որն արդեն ներդրված է չորս մարզերում եւ ավարտվելու է մինչեւ 2022 թվականը:

Ռոբերտ Ստեփանյանը նաեւ տեղեկացրել է, որ այժմ ընթացքի մեջ են կրթական ծրագրերի եւ չափորոշիչների փոփոխությունների մշակումները, որոնք նպատակ ունեն բեռնաթափել ուսումնական ծրագրերը: Հայաստանը սովորող-

ների ուսումնական ծանրաբեռնվածության առումով աշխարհում առաջին տեղերից մեկն է զբաղեցնում, սակայն նույն բանը, ինչպես վարչության պետն է նշել, չի կարելի ասել օգտակարության գործակցի առումով: Այժմ վերանայվում են ուսումնական ծրագրերը՝ առաջնահերթությունը տալով ՍՏԵՄ (մաթեմատիկա, բնագիտություն), ՏՏ, օտար լեզուների եւ հայագիտական առարկաների դասավանդմանը: Մասնագիտական եւ բարձրագույն կրթության ոլորտում առաջնային խնդիր է դիտարկվում շրջանավարտի հմտությունների եւ գիտելիքների համապատասխանեցման աշխատաշուկայի պահանջներին: Այդ նպատակով կարելու է գործատուների ներգրավումը կրթության կառավարման մարմիններում, փորձնական նպատակով ներդրված է դուրս (աշխատանքի վրա հիմնված) կրթության համակարգը:

Քննարկման ընթացքում ԿԳՆ զարգացման ծրագրերի եւ մոնիթորինգի վարչության պետը պատասխանել է քննարկմանը մյուս մասնակիցների՝ Կրթական քաղաքացիական նախաձեռնության ներկայացուցիչ **Լուսինե Խատայանի**, Հանրային քաղաքականության ինստիտուտի կրթական ծրագրերի համակարգող **Աննա Գեւորգյանի**, Հանրային քաղաքականության ինստիտուտի գիտազտող **Գոհարիկ Տիգրանյանի** կրթության ծրագրին վերաբերող դիտարկումներին եւ հարցերին:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ



# 2018-2019 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական, պետական ավարտական եւ կենտրոնացված պետական ավարտական քննությունների կազմակերպման եւ անցկացման աշխատակարգ

## Ըստ ՀՀ ԿԳ նախարարի՝ 2019 թ. փետրվարի 22-ի N 152-Ա/2 հրամանի հավելված 1-ի

1. Սույն աշխատակարգով սահմանվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետեւ՝ Հաստատություն) 4-րդ դասարաններում գիտելիքների ստուգման, 9-րդ դասարաններում ավարտական եւ կենտրոնացված ավարտական եւ 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների անցկացման գործընթացը, որը ներառում է քննությունների հայտագրումը, կազմակերպումը, անցկացումը, ստուգումը, գնահատումը, արդյունքների հրապարակումը եւ բողոքարկումը:

2. Հաստատությունների 4-րդ դասարաններում անցկացվում է գիտելիքների ստուգում՝ **հունիսի 1-10-ը**՝ համաձայն հավելված 2-ի (**տես՝ էջ 17**):

3. Հաստատությունների 9-րդ դասարաններում անցկացվում են կենտրոնացված ավարտական քննություն **«Հայոց լեզու եւ հայ գրականություն»** առարկայից՝ **մայիսի 26-ին**, ավարտական քննություններ՝ **հունիսի 1-21-ը**՝ համաձայն հավելված 2-ի (**տես՝ էջ 17**):

4. Հաստատությունների 12-րդ դասարաններում անցկացվում են պետական ավարտական քննություններ՝ **դեկտեմբերի 24-28-ը** կամ **հունիսի 1-21-ը**՝ համաձայն հավելված 2-ի (**տես՝ էջ 17**):

5. 12-րդ դասարանի սովորողը դեկտեմբեր ամսին կարող է հանձնել այն առարկայի(ների) պետական ավարտական քննություն(ներ)ը, որ(ոնք)ը չի ընտրել եւ չի ուսումնասիրելու 2-րդ կիսամյակում:

6. Միասնական քննությանը մասնակցող սովորողը դեկտեմբերին պետական ավարտական քննություն(ներ) կարող է հանձնել այն առարկայի(ների)ց, որ(ոնք)ը չի հանձնելու միասնական քննությունների համակարգով:

7. Սովորողի որոշմամբ, անհրաժեշտության դեպքում, մինչև սույն առարկայից եւ միասնական, եւ պետական ավարտական քննություն հանձնելու դեպքում միջնակարգ կրթության ատեստատում գրվում է սովորողի նախընտրած գնահատականը (միավորը):

8. Դեկտեմբերին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու համար սովորողները մինչև դեկտեմբերի 5-ը գրավոր դիմում են հաստատության տնօրենին: Հաստատության տնօրենը դեկտեմբերի 5-ից մինչև 11-ը ներառյալ քննություններ հանձնողների դիմում-հայտերը էլեկտրոնային եղանակով փոխանցում է Կարգավորման աշխատակազմի՝ «Գնահատման եւ թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետեւ՝ ԳԹԿ):

9. 12-րդ դասարանի հունիս ամսին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցողների դիմում-հայտերը հաստատության տնօրենը նույն ձևով լրացնում են ԳԹԿ է փոխանցում **փետրվարի 1-ից մինչև մարտի 15-ը**:

10. 9-րդ դասարանի կենտրոնացված եւ ավարտական քննություններ հանձնողների դիմում-հայտերը եւ ցուցակ-հայտերը հաստատության տնօրենը լրացնում եւ ԳԹԿ է փոխանցում **փետրվարի 1-ից մինչև մարտի 10-ը**:

11. Ուսման մեջ գերազանց առաջադիմության համար Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության գերազանցության մեդալի (այսուհետ՝ Մեդալ) հավակնորդներին թույլատրվում է մասնակցել քննության՝ համաձայն կրթության եւ գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հաստատած անվանացանկի: Քննությունից բացակայած կամ ուշացած Մեդալի հավակնորդ սովորողը գրվում է Մեդալ ստա-

նալու իրավունքից:

12. Ավարտական եւ պետական ավարտական քննությունները սկսվում են ժամը **10:00-ին**: Սովորողները ուսումնական հաստատություն են ներկայանում ժամը **9:00-ին**:

13. Կենտրոնացված ավարտական քննությունը սկսվում է ժամը **11:00-ին**: Սովորողները քննական կենտրոններ են ներկայանում ժամը **10:00-ին**:

14. Քննությունների միջև ընկած օրերին դասավանդող ուսուցիչները սովորողների համար քննական առարկաներից կազմակերպում են խորհրդատվություններ՝ Հաստատության տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցով:

15. 4-րդ դասարանում գիտելիքների ստուգումն անցկացվում է.

- 1) «Մայրենի» առարկայից՝ գրավոր (թեստ). քննությանը տրվում է **60 րոպե**:
- 2) «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր (թեստ). քննությանը տրվում է **60 րոպե**:
- 3) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար նաեւ՝ «**Ռուսաց լեզու**» առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում:
- 4) Ազգային փոքրամասնությունների դասարաններում նաեւ՝ «**Մայրենի լեզու եւ գրականություն**» առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում:
- 5) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար «**Մաթեմատիկա**» առարկայի թեստերը կազմվում են ռուսերենով:
- 6) Գիտելիքների ստուգման առաջադրանքները (առնվազն 4 տարբերակ) կազմում են Հաստատության մեթոդիկականությունները՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված նմուշների: Առաջադրանքների նյութը ընտրվում է Նախարարության կողմից երաշխավորված եւ Հաստատությունում գործածվող դասագրքերից:
- 7) Հաստատության տնօրենը հաստատում է առաջադրանքները, կնքում եւ ծրարում: Ծրարներից մեկը բացվում է գիտելիքների ստուգման օրը՝ քննասենյակում, սովորողների ներկայությամբ:
- 8) Գրավոր աշխատանքը գնահատվում է **10 միավորային համակարգով**:
- 9) Գիտելիքների ստուգումն իրականացնում են դասավանդող ուսուցիչը եւ տնօրենի կողմից նշանակված ներկայացուցիչը:
- 10) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գիտելիքների ստուգման ժամանակ տրվում է լրացուցիչ **40 րոպե**՝ ապահովելով սովորողի կարիքին համապատասխան պայմաններ:
16. 4-րդ, 9-րդ եւ 12-րդ դասարաններում անցկացվող «**Ռուսաց լեզու**», «**Ռուս գրականություն**» (բանավոր, ռուսերենով ուսուցմամբ համապատասխան դասարանների համար) եւ «**Մայրենի լեզու եւ գրականություն**» (բանավոր, ազգային փոքրամասնությունների համար) առարկաների քննական առաջադրանքների հարցաշարերը եւ հարցատոմսերը կազմում են սույն Հաստատության առարկայական մեթոդական միավորումները՝ Նախարարության կողմից երաշխավորված դասագրքերի եւ նյութերի հիման վրա:
17. 9-րդ դասարանում ավարտական, կենտրոնացված ավարտական քննական թեստերի առաջադրանքները կազմվում են ԳԹԿ-ի կողմից, առաջադրանքները ընտրվում են Նախարարության կողմից երաշխավորված եւ Հաստատությունում գործածվող դասագրքերից կամ ձեռնարկներից:

18. 12-րդ դասարանում պետական ավարտական քննական առարկաների թեստերը կազմվում են ԳԹԿ-ի կողմից, առաջադրանքները ընտրվում են Նախարարության կողմից երաշխավորված շտեմարաններից եւ Հաստատությունում գործածվող դասագրքերից կամ ձեռնարկներից:

19. «Ֆիզկուլտուրա» առարկայի 9-րդ դասարանում ավարտական քննությունը, 12-րդ դասարանում ամփոփիչ ստուգաբանական քննություն են Հաստատության տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից՝ հետեյալ կազմով. հանձնաժողովի նախագահ, դասավանդող (քննող) ուսուցիչ եւ հանձնաժողովի երկու անդամներ:

20. 9-րդ դասարանի սովորողները հանձնում են ավարտական քննություններ.

- 1) «**Հայոց լեզու եւ հայ գրականություն**» առարկայից՝ գրավոր (կենտրոնացված, թեստ). քննության տեւողությունը՝ **120 րոպե**:
- 2) «**Գրականություն**» առարկայից՝ բանավոր:
- 3) «**Հայոց պատմություն**» առարկայից՝ բանավոր:
- 4) «**Մաթեմատիկա**» առարկայից՝ գրավոր (թեստ). քննության տեւողությունը՝ **120 րոպե**:
- 5) «**Բնագիտություն**» («**Ֆիզիկա**», «**Բիոլոգիա**», «**Կենսաբանություն**»), «**Աշխարհագրություն**»՝ սովորողի ընտրությամբ՝ առարկայից՝ գրավոր (թեստ). քննության տեւողությունը՝ **120 րոպե**:
- 6) «**Օտար լեզու**» («**Ռուսերեն**», «**Անգլերեն**», «**Ֆրանսերեն**», «**Գերմաներեն**» եւ այլ լեզուներ)՝ սովորողի ընտրությամբ՝ առարկայից՝ բանավոր:
- 7) «**Ֆիզկուլտուրա**» առարկայից՝ քննաշրջանի ընթացքում (նորմատիվների հանձնում):
- 8) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար գիտելիքների ստուգում անցկացվում է նաեւ «**Ռուս գրականություն**» առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում:
- 9) Ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար անցկացվում է նաեւ «**Մայրենի լեզու եւ գրականություն**» առարկայից՝ բանավոր՝ ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար՝ քննաշրջանի ընթացքում:
21. Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար «**Մաթեմատիկա**» առարկայի եւ «**Բնագիտություն**» («**Ֆիզիկա**», «**Բիոլոգիա**», «**Կենսաբանություն**», «**Աշխարհագրություն**») առարկաների ավարտական քննությունների թեստերը կազմվում են ռուսերենով:
22. Հատուկ հանրակրթական դպրոցներում սովորող երեխաները «**Հայոց լեզու եւ հայ գրականություն**» կենտրոնացված ավարտական քննությունը հանձնում են իրենց դպրոցներում՝ սույն աշխատակարգի պահանջներին համապատասխան:
23. Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները «**Հայոց լեզու եւ հայ գրականություն**» առարկայի կենտրոնացված ավարտական քննությունը կարող են հանձնել իրենց հաստատությունում կամ կենտրոնացված՝ ըստ սովորողի ընտրության:
24. 9-րդ դասարանում բանավոր քննությունները կազմակերպելու, անցկացնելու եւ գնահատելու նպատակով հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են հաստատության տնօրենը կամ նրա նշանակված ուսուցիչը (հանձնաժողովի նա-

խագահ), սույն առարկայի ուսուցիչը (քննող ուսուցիչ) եւ ընթերական (սույն կամ հարակից առարկայի մասնագետ).

- 1) սովորողները քննասենյակ են մտնում ցուցակում իրենց անունների հերթականությամբ համապատասխան,
- 2) սովորողների ցուցակում սովորողն իր անվան դիմաց ստորագրում է, որից հետո քննասենյակում ընտրում է քննատոմսը,
- 3) քննատոմսը ընտրելուց հետո սովորողը քննասենյակում ստանում է բանավոր հարցման թերթ, որում կարող է գրի առնել իր պատասխանները, լրացուցիչ հարցերը եւ դրանց պատասխանները,
- 4) Սովորողի պատասխանը գնահատվում է **20 միավորանոց** համակարգով:
25. Հաստատությունները «**Գրականություն**», «**Հայոց պատմություն**» եւ «**Օտար լեզու**» առարկաների 9-րդ դասարանների ավարտական քննությունների տոմսերը կազմում են Հաստատության մեթոդիկականությունները՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված եւ տրամադրված հարցաշարերի եւ տոմսերի նմուշների: «**Գրականություն**» եւ «**Օտար լեզու**» առարկաների ավարտական քննական առաջադրանքների հարցաշարերը եւ տոմսերի նմուշները կազմվում են 7-9-րդ դասարանների ծրագրային նյութից, «**Հայոց պատմություն**» առարկայի քննական առաջադրանքները՝ 6-9-րդ դասարանների ծրագրային նյութից:
26. 9-րդ դասարանում «**Մաթեմատիկա**» եւ «**Բնագիտություն**» առարկաների ավարտական քննությունների կազմակերպման, անցկացման, ստուգման եւ բողոքարկման ընթացակարգը սահմանվում է՝ սույն աշխատակարգի 29-75-րդ կետերի պահանջներին համապատասխան:
27. 12-րդ դասարանում շրջանավարտները հանձնում են պետական ավարտական քննություններ.

  - 1) «**Հայոց լեզու եւ հայ գրականություն**» առարկայից՝ գրավոր (թեստ). քննության տեւողությունը՝ **120 րոպե**:
  - 2) «**Հայոց պատմություն**» առարկայից՝ գրավոր (թեստ). քննության տեւողությունը՝ **120 րոպե**:
  - 3) «**Մաթեմատիկա**» առարկայից՝ գրավոր (թեստ). քննության տեւողությունը՝ **120 րոպե**:
  - 4) «**Ֆիզկուլտուրա**» առարկայից՝ նորմատիվների հանձնում (ստուգաբան)՝ մայիսի 27-ից մինչև քննաշրջանի ավարտն ընկած ժամանակահատվածում:
  - 5) «**Ռուս գրականություն**» առարկայից՝ բանավոր՝ (ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար) սովորողի ընտրությամբ՝ դեկտեմբերին կամ հունիսին՝ քննաշրջանի ընթացքում:
  - 6) «**Մայրենի լեզու եւ գրականություն**» առարկայից՝ բանավոր՝ (ազգային փոքրամասնությունների դասարանների համար)՝ սովորողի ընտրությամբ՝ դեկտեմբերին կամ հունիսին՝ քննաշրջանի ընթացքում:
  28. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ մտավոր հետամնացություն ունեցող սովորողների հաջորդ դասարան փոխադրումը կատարվում է անհատական ուսուցման պլանով իրականացված գնահատման հիման վրա (ԱՈՒՊ):
  29. Ավարտական եւ պետական ավարտական քննությունները կազմակերպվում են քննական կենտրոններում: Քննական կենտրոն է դառնում յուրաքանչյուր Հաստատություն: Հաստատության տնօրենը կամ նրան փոխարինող անձն ի պաշտոնե սույն քննական կենտրոնի ղեկավարն է:

# 2018-2019 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական, պետական ավարտական եւ կենտրոնացված պետական ավարտական քննությունների կազմակերպման եւ անցկացման աշխատակարգ

սկիզբը՝ էջ 15

30. Կենտրոնացված ավարտական քննությունը կազմակերպում եւ անցկացնում է ԳԹԿ-ն: Քննական կենտրոնների ցանկը, կենտրոնների ղեկավարների, ԳԹԿ ներկայացուցիչների, կազմակերպիչների եւ առարկայական հանձնաժողովների անդամների ցուցակը հաստատում է ԳԹԿ տնօրենը:

31. Ավարտական եւ պետական ավարտական քննությունների կազմակերպիչներին, օգնականներին, հերթապահներին նշանակում է քննական կենտրոնի ղեկավարը: Կազմակերպիչները չեն կարող լինել տվյալ քննական առարկայի մասնագետներ:

32. Մինչեւ 20 սովորող ունեցող քննասենյակում աշխատանքները համակարգում է 2 կազմակերպիչ: 20-ից ավելի սովորող ունեցող քննասենյակում առաջին 20 սովորողների համար՝ 2 կազմակերպիչ, մեկական կազմակերպիչ՝ յուրաքանչյուր հաջորդ 20-ի համար, եւս մեկ կազմակերպիչ՝ վերջին 20 եւ ավելի սովորողների համար:

33. Ավարտական, կենտրոնացված ավարտական եւ պետական ավարտական քննությունները անցկացվում են՝ սույն աշխատակարգի 29-75-րդ կետերի պահանջներին համապատասխան:

34. Քննական կենտրոնի ղեկավարը քննասենյակի կազմակերպիչներից մեկին նշանակում է պատասխանատու կազմակերպիչ, որը համակարգում է քննասենյակի կազմակերպիչների աշխատանքը:

35. Քննական կենտրոնի ղեկավարը քննությունը սկսվելուց մեկ ժամ առաջ կատարում է կազմակերպիչների գրանցում եւ վիճակահանությանը բաշխում կազմակերպիչներին՝ ըստ քննասենյակների:

36. Սովորողների մուտքը քննասենյակ սկսվում է քննական կենտրոնի ղեկավարի հրահանգով:

37. Սովորողը քննություններին ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով՝ (ծննդյան վկայական, անձնագիր, նույնականացման քարտ), կենտրոնացված ավարտական քննության մասնակիցները՝ անձնագրով կամ հաստատության տնօրենի կողմից տրված լուսանկարով տեղեկանքով եւ ԳԹԿ-ի կողմից տրված անցաթղթով, Մեդալի հավակնորդները՝ անձնագրով կամ հաստատության տնօրենի կողմից տրված լուսանկարով տեղեկանքով:

38. Սովորողը մուտքում է վիճակահանության սեղանին եւ վիճակահանության թերթիկի միջոցով ընտրում իր նստարանի համարը: Կազմակերպիչը սովորողների տվյալ խմբի ցուցակում գրում է սովորողի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, նստարանի համարը: Սովորողը ցուցակում ստորագրում է իր տվյալների տողում՝ «Մատարանի համարը» սյունակում:

39. Քննասենյակում չի թույլատրվում տեղափոխություններ կատարել:

40. Քննությունը սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը ԳԹԿ ներկայացուցիչից ստանում է քննական առաջադրանքների փաթեթները:

41. Քննությունը սկսվելուց առնվազն կես ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը քննասենյակի պատասխանատուին տալիս է յուրաքանչյուր խմբի համար նախատեսված փաստաթղթերի փաթեթը՝ բացի առաջադրանքներից:

42. Քննություններին սովորողներին չի թույլատրվում քննասենյակ բերել թղթային հեռախոսներ կամ կապի այլ միջոցներ, տետրեր, դասագրքեր, ուսումնական եւ այլ ուղեցույց-ձեռնարկներ:

43. Սովորողի՝ քննասենյակում տեղավորվելուց հետո, քննական կենտրոնի ղեկավարը կամ օգնականը քննասենյակ է բերում քննական առաջադրանքների ծրար-

ները: Քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը ծրարները ցուցադրում է սովորողներին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով ծրարների փակ եւ ամբողջական լինելու հանգամանքի վրա: Ծրար(ներ)ը բացելու համար պատասխանատուն հրավիրում է առաջին նստարան(ներ)ին նստած սովորողներից մեկին: Առաջին շարքում սովորողների բացակայության դեպքում՝ հրավիրվում է սովորող այլ շարքից: Ծրարները բացում մասին նշվում է արձանագրության մեջ:

44. Քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը սովորողներին տեղեկացնում է քննասենյակում վարքի կանոնների պահպանման, ինչպես նաեւ բողոքարկման տեսակների մասին: Քննասենյակում քննության անցկացման կարգն ընթերցելուց եւ սովորողներին ցուցումներ տալուց հետո կազմակերպիչները բաժանում են առաջադրանքները: Սովորողը, առաջադրանքը ստանալուն պես, շապիկի համապատասխան մասում գրում է խմբի եւ իր նստարանի համարը: Առաջադրանքների վերջնական բաշխումից հետո պատասխանատու կազմակերպիչը հայտարարում է քննության սկիզբը, տեղությունը եւ գրատախտակին նշում է քննության սկիզբը եւ ավարտը:

45. Քննասենյակից սովորողը կարող է դուրս գալ միայն քննասենյակի պատասխանատուի թույլտվությամբ եւ միջանցքի հերթապահի ուղեկցությամբ:

46. Խմբի կազմակերպիչը ավելորդ (չօգտագործված, խոտանված) քննական նյութերը հաշվարկում, արձանագրում է, իսկ քննության ավարտից հետո փաթեթավորում եւ հանձնում է քննասենյակի պատասխանատու կազմակերպիչին:

47. Առաջադրանքի բովանդակության վերաբերյալ սովորողի հարցերը չեն քննարկվում:

48. Քննության ընթացքում ի հայտ եկած տպագրական կամ այլ թերություններ ունեցող առաջադրանքները փոխարինվում են նորով:

49. Քննության ընթացքում սովորողների կողմից առաջադրանքների կատարման ժամանակ քննասենյակներում, բացի կենտրոնի ղեկավարից եւ կազմակերպիչներից, կարող են ներկա գտնվել Նախարարության եւ ԳԹԿ-ի ներկայացուցիչները:

50. Քննության ավարտից 20 րոպե առաջ քննասենյակի պատասխանատուն սովորողների ուշադրությունը հրավիրում է ժամանակի վրա եւ հիշեցնում առաջադրանքների պատասխանները համապատասխան ձեւաթղթերի վրա անցկացնելու մասին:

51. Սովորողի կողմից սույն ընթացակարգի պահանջները խախտելու կամ դրանց չենթարկվելու դեպքում քննասենյակի պատասխանատուին իրավունք է վերապահվում մեկ անգամ նախազգուշացված սովորողին, քննական կենտրոնի ղեկավարի հետ համաձայնեցնելով, հեռացնել քննասենյակից:

52. Հեռացվող սովորողից վերցվում են քննական նյութերը, պատասխանների ձեւաթղթի էջի վրա գրվում է՝ «Հեռացված է քննությունից»: Քննասենյակի եւ խմբի արձանագրությունների մեջ գրանցվում է այդ փաստը, հեռացվող սովորողի համարը, հեռացման պատճառը:

53. Քննության համար նախատեսված ժամանակի ավարտին սովորողը հանձնում է իր առաջադրանքը եւ ստորագրում իր անվան դիմաց: Եթե սովորողն ավարտել է աշխատանքը սահմանված ժամանակից շուտ, ապա նա կարող է այն հանձնել եւ, ստորագրելով իր անվան դիմաց, դուրս գալ քննասենյակից: Քննության համար հատկացված ժամանակի ավարտին կազմակերպիչները հեղանկներից հավաքում են քննական

թեստերը:

54. Սահմանված ժամկետում գրավոր աշխատանքը չավարտած սովորողներն այն հանձնում են անավարտ վիճակում:

55. Պատասխանատուն քննական աշխատանքները քննության արձանագրության հետ հանձնում է քննական կենտրոնի ղեկավարին: Քննական կենտրոնի ղեկավարը, ներկայացված քննական աշխատանքները վերահաշվարկելով, լրացնում է քննական կենտրոնում անցկացված քննության վերջնական արձանագրությունը, որտեղ նշվում է քննության մասնակիցների, բացակաների, քննությունից հեռացվածների, որեւէ պատճառով քննությունն ընդհատվածների թիվը (եթե կան):

56. Քննական գրավոր աշխատանքները, մինչեւ դրանց ստուգման ավարտը, պահպանվում են քննական կենտրոնի ղեկավարի մոտ, ապա սահմանված կարգով արխիվացվում:

57. Կենտրոնացված ավարտական քննությունից հետո թեստի կարծ եւ ընդարձակ պատասխան պահանջող մասերը ստուգում, գնահատում եւ պատասխանների ձեւաթղթերը փոխանցում առարկայական հանձնաժողովը, որի նախագահը աշխատանքների ավարտից հետո պատասխանների ձեւաթղթերը հանձնում է կենտրոնի ղեկավարին:

58. Կենտրոնացված ավարտական քննության քննական կենտրոնների ղեկավարները կամ ԳԹԿ ներկայացուցիչները պատասխանների ձեւաթղթերը փակ ծրարով հանձնում են ԳԹԿ մարզային ներկայացուցիչին՝ ԳԹԿ տեղափոխելու համար:

59. Պատասխանների ձեւաթղթերը ստուգվում են ԳԹԿ-ում՝ համակարգչային ծրագրերի միջոցով:

60. Կենտրոնացված ավարտական քննական գնահատականները հրապարակվում են քննությունից հետո՝ 7-րդ օրը:

61. Քննական գնահատականների ցուցակները առանձնացվում են՝ ըստ քննություններից մասնակցած դպրոցների: Քննական գնահատականների ցուցակները՝ ըստ դպրոցների, վավերացվում են ԳԹԿ տնօրենի կողմից:

62. Ավարտական եւ պետական ավարտական քննական առաջադրանքները ստուգվում են քննական կենտրոնի ղեկավարի հրամանով ստեղծված ստուգող հանձնաժողովի կողմից, քննության օրը՝ ժամը 14:00-ին, ԳԹԿ համակարգչային կայքում տեղադրված առաջադրանքների ճիշտ պատասխանների հիման վրա: Ստուգող հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե Հաստատության տնօրենն է:

63. 9-րդ դասարանում «Մաթեմատիկա» եւ «Բնագիտություն» առարկաների քննությունների ստուգող հանձնաժողովների անդամների 50%-ը տվյալ առարկաների մասնագետներ են:

64. 12-րդ դասարանում ստուգող հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ:

65. Քննական արդյունքները գնահատելիս քննական հանձնաժողովի անդամների միջեւ տարածայնություն առաջանալու դեպքում հարցը լուծվում է հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

66. Քվեարկության արդյունքներում ստացված հավասար ձայների դեպքում վճռորոշ է՝

- 1) 4-րդ դասարանում՝ դասավանդող ուսուցչի առաջարկած գնահատականը,
- 2) 9-րդ եւ 12-րդ դասարաններում՝ քննական կամ առարկայական հանձնաժողովի նախագահի առաջարկած գնահատականը,
- 3) նշանակված գնահատականի հետ համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովը

վի անդամ(ներ)ը արձանագրության մեջ կարող է(են) կատարել հատուկ նշում:

67. Ստուգումն իրականացվում է՝ ԳԹԿ-ի կողմից հաստատված եւ հրապարակված «Ցուցումներ»-ի պահանջներին եւ գնահատման չափանիշներին համապատասխան: Գրավոր աշխատանքի սեւագրությունը չի ստուգվում եւ չի գնահատվում:

68. Ավարտական եւ պետական ավարտական քննական աշխատանքների արդյունքները հրապարակվում են տվյալ քննության հաջորդ օրը՝ ժամը 14:00-ին: Քննական կենտրոնի ղեկավարը ցուցակների կրկնօրինակը փակցնում է քննական կենտրոնի մուտքի մոտ:

69. Քննական կենտրոնում քննական գնահատականների ցուցակներն առանձնացվում են՝ ըստ դասարանների, ցուցակները վավերացվում են ստուգող հանձնաժողովի նախագահի կողմից:

70. Բանավոր քննությունները ձայնագրվում կամ արձանագրվում են: Արձանագրության մեջ ներառվում են հարցատոմսի համարը, հարցերը, պատասխանները: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, անդամները եւ տվյալ սովորողը:

71. Քննությունների կազմակերպման, անցկացման եւ արդյունքների գնահատման վերաբերյալ բողոքները կարող են լինել՝

- 1) քննության անցկացման կարգի խախտման մասին,
- 2) քննության արդյունքների հետ անհամաձայնության մասին:

72. Սույն աշխատակարգի 71-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում սովորողը կարող է բողոք ներկայացնել քննական կենտրոնի ղեկավարին՝ քննության ավարտից անմիջապես հետո: Կենտրոնի ղեկավարը տեղում քննարկում եւ պատասխանում է բողոքը ներկայացնողին:

73. Սույն աշխատակարգի 71-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում բողոքները ներկայացվում են քննող հանձնաժողովի նախագահին՝ բանավոր քննության դեպքում՝ քննության պահին կամ մինչեւ քննասենյակից դուրս գալը, գրավոր քննության դեպքում՝ քննության արդյունքները հրապարակելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում՝ Հաստատության տնօրենին: Ավարտական եւ պետական ավարտական գրավոր քննության բողոքի արդյունքները, ոչ ուշ քան դիմումը ընդունելուց հետո 24 ժամվա ընթացքում, գրավոր ներկայացվում է դիմողին: Կենտրոնացված ավարտական քննության գնահատականների վերաբերյալ բողոքը Հաստատության տնօրենը բողոքը ընդունելուց հետո 24 ժամվա ընթացքում էլեկտրոնային եղանակով փոխանցում է ԳԹԿ:

74. Կենտրոնացված ավարտական քննության թեստի ընտրովի պատասխան պահանջող մասի վերաբերյալ բողոքարկումը իրականացվում է ԳԹԿ համակարգչային բաժինը, իսկ կարծ եւ ընդարձակ պատասխան պահանջող մասերի վերաբերյալ բողոքարկումը քննարկում եւ համապատասխան որոշում է կայացնում ԳԹԿ-ում տնօրենի հրամանով ստեղծված մասնագիտական հանձնաժողովը: Դիմում-բողոքների քննարկումից հետո կարող է որոշում ընդունվել քննության գնահատականի պահպանման կամ բարձրացման, ինչպես նաեւ իջեցման մասին, որը հրապարակվում է:

75. Կենտրոնացված ավարտական քննության բողոքարկման արդյունքները ԳԹԿ-ն հրապարակում է դիմում-բողոքները ստանալուց հետո 5-րդ օրը:

76. Բողոքարկման արդյունքների հետ անհամաձայնության դեպքում դիմումի հեղինակը կարող է բողոքարկել վերադասույթ կարգով՝ Նախարարություն եւ (կամ) դատարան:



# 2018-2019 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական, պետական ավարտական եւ կենտրոնացված պետական ավարտական քննությունների կազմակերպման եւ անցկացման ժամանակացույց

## Ըստ ՀՀ ԿԳ նախարարի՝ 2019 թ. փետրվարի 22-ի N 152-Ա/2 հրամանի հավելված 2-ի

### 4-րդ դասարան

Մայրենի՝ գրավոր (թեստ)՝	03.06.2019թ.
Մաթեմատիկա՝ գրավոր (թեստ)՝	05.06.2019թ.
Ռուսաց լեզու՝ բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար	<b>քննաշրջանի ընթացքում</b>
Մայրենի լեզու և գրականություն՝ բանավոր՝ ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար	<b>քննաշրջանի ընթացքում</b>

### 9-րդ դասարան

Հայոց լեզու և հայ գրականություն (կենտրոնացված, գրավոր, թեստ)	26.05.2019թ.
Գրականություն (բանավոր)	03.06.2019թ.
Մաթեմատիկա (գրավոր, թեստ)	06.06.2019թ.
Օտար լեզու («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն», այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ, բանավոր)	10.06.2019թ.
Բնագիտություն («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»՝ սովորողի ընտրությամբ առարկայից՝ գրավոր, թեստ)	13.06.2019թ.

Հայոց պատմություն (բանավոր) 17.06.2019թ.

Ֆիզիկոլոգիա՝ նորմատիվների համեմուն (ստուգարք) մայիսի 27-ից մինչև քննաշրջանի ավարտն ընկած ժամանակահատվածում

Ռուսաց լեզու՝ բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար **քննաշրջանի ընթացքում**  
Մայրենի լեզու և գրականություն առարկայից՝ բանավոր՝ ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար **քննաշրջանի ընթացքում**

### 12-րդ դասարան

Հայոց լեզու և հայ գրականություն (գրավոր)	05.06.2019թ.
Հայոց պատմություն (գրավոր)	12.06.2019թ.
Մաթեմատիկա (գրավոր)	19.06.2019թ.
Ռուսաց լեզու՝ բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար	<b>քննաշրջանի ընթացքում</b>
Մայրենի լեզու և գրականություն առարկայից՝ բանավոր՝ ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար	<b>քննաշրջանի ընթացքում</b>

### Տնտեսագիտական համալսարան

## Պետք է վերացվեն բոլոր միջնորդությունները

Իր առաջին ընդգրկում հանդիպմանը համալսարանի ուսանողների հետ ՀԳՏՀ ղեկավարի պաշտոնակատար Ռուբեն Հայրապետյանը ներկայացրեց համալսարանում նախատեսվող փոփոխությունները, ռազմավարական ծրագրի գերակայությունները, հանգամանորեն պատասխանեց հարցերին:



«Ես իմ նշանակումից ի վեր զգում էի այս հաղորդակցության կարիքը, ձեզ հետ շփման եւ ձեզ հետ խնդիրների քննարկման, որովհետև նույնիսկ իմ նշանակման լուրերից սկսած՝ ես արդեն փորձում էի փոփոխել այն բոլոր խնդիրները, որոնք այս պահին առկա են համալսարանում եւ, բնականաբար, դրանց լուծման համար պետք է հետևողական աշխատանք կատարել: Եվ այս առումով, ցանկանում եմ նշել, որ դուք՝ ուսանողները, լինելու եք մեր քաղաքականության կենտրոնում», - հայտարարեց Ռուբեն Հայրապետյանը, ապա ավելացրեց. «Համալսարանի պաշտոնական կայքից ու նաև ֆեյսբուքյան էջից դուք արդեն գիտեք, որ մեր բարեփոխումները մեկնարկել են, գործընթացները եւ հայտարարությունները հասանելի կերպով ներկայացվում են, սակայն պետք է նշեմ, որ խնդիրները շատ են, եւ դրանց լուծումները հեշտ չեն»:

րություն տրվի՝ բարելավելու դասավանդման որակը, իսկ ուսանողներին՝ արժեւորելու կրթությունը, եւ պարզապես դիպլոմի համար բուռն ելած ուսանողը կամ աշխատավարձի համար աշխատանքի ելող դասախոսը չեն կարող շարունակել իրենց հետագա գործունեությունը: «Իհարկե, այստեղ մենք կհանդիպենք բարդությունների, բայց այդ բարդությունները հաղթահարելի են», - ասաց նա:

«ՀԳՏՀ-ում պետք է վերացվեն բոլոր միջնորդությունները. ես ինքս դրանք կտրուկ մերժում եմ՝ առանց որևէ բացառության», - հայտարարեց համալսարանի ղեկավարը, այնուհետև նախատեսվող փոփոխություններից առանձնացրեց դասախոսությունների մեթոդաբանության բարելավումը՝ ընդգծելով, որ թելադրությունների ձեռով դասախոսությունները սեպտեմբերից կդադարեցվեն, ամբողջությամբ կվերակառուցվի փորձառության կազմակերպման գործընթացը, կվերանայվի քննություններ-

րի անցկացման կարգը, կներդրվեն կոնկրետ պատասխանատուներով հետադարձ կապի հստակ կառուցակարգեր՝ ուսանողներին հուզող հարցերին պատշաճ լուծում տալու համար: «Մենք միասին պետք է կարողանանք փոխել մեր համալսարանը, այն դարձնել ավելի լավը, հակառակ դեպքում այստեղ իմ գալու առաքելությունը ես կհամարեմ չիրականացված: Եվ որ ամենակարեւորն է, սիրելի ուսանողներ, դուք պետք է դառնաք այս գործընթացների սրտացավ եւ պահանջատեր վերահսկողը», - հայտարարեց Ռուբեն Հայրապետյանը:

Այնուհետև ուսանողները հանդես եկան մի քանի տանյակ հարցերով, պնդումներով, մտահոգություններով: Դրանցից առանցքայինները վերաբերում էին արտադրական փորձառությունների կազմակերպմանը, որոնք ուսանողների խոսքով, բովանդակային եւ արդյունավետ չեն: Ռուբեն Հայրապետյանը նշեց, որ տեղյակ է խնդրին, հաջորդ օրն իսկ պատասխանատու

ստորաբաժանմանը արագ լուծումներ առաջարկելու հանձնարարական կտա, այնուհետև ընդգծեց, որ այս պահին քննարկվում է փորձառության հայեցակարգը փոխելու հարցը. նախ՝ փորձել կազմակերպել այն արդեն երկրորդ կուրսի երկրորդ կիսամյակից սկսած, ապա՝ ըստ առարկաների: Ռուբեն Հայրապետյանը նաև ընդգծեց, որ այս փուլում ինքն հաճախակի հանդիպում է խոշոր կազմակերպությունների ղեկավարների հետ, եւ քննարկվող հարցերի թվում է նաև այդ կազմակերպություններում մեր ուսանողների փորձառության պատշաճ կազմակերպումը:

Մեկ այլ հարցադրմանը, թե ինչու ուսանողները ի սկզբանե չեն կարողանում ծանոթանալ դասավանդվող առարկաների ծրագրերին ու ակնկալվող վերջնարդյունքներին, Ռուբեն Հայրապետյանը արձագանքեց, որ դա անհրաժեշտություն է եւ շուտով հասանելի կլինի ուսանողներին, սակայն մինչ այդ կարելու է բարելավել դրանց որակը: Օտար լեզուներին հատկացվող ժամաքանակը ավելացնելու մասին հարցին նա պատասխանեց՝ համալսարանում խնդիրը մասնագիտական օտար լեզվի բարելավումն է, եւ այս համատեքստում ոչ այնքան օտար լեզվին հատկացվող ժամաքանակի ավելացումն է կարելու, որքան մատուցվող ծառայության որակի բարելավումը:

«Փոխատեղմանն առնչվող անարդար բոլոր երեւոյթները պետք է նվազեցվեն», - հայտարարեց ղեկավարը՝ պաշտոնակատարը՝ արձագանքելով ուսանողներից մեկի մտահոգությանը, թե ներկա համակարգն անարդար է եւ որպես կարճաժամկետ լուծում՝ լավ կլինի

վերադառնալ նախորդ համակարգին: Բուռն ղեկավար խոստացավ անդրադառնալ այս հարցին եւս:

Ռուբեն Հայրապետյանի պատասխանները համապարփակ պատկերացում ձեւավորեցին համալսարանի հետագա իմնարար գործունեության մասին. դուրս մասնագիտությունների ներդրման հնարավորությունն արժարժվում է պատրաստվող ռազմավարական ծրագրում, ազդեցության գործակից ունեցող միջազգային ամսագրերում ասպիրանտների եւ դասախոսների հողվածների տպագրման նախնական շրջանում համալսարանի ղեկավարությունը հոնորարներ կհատկացնի, մագիստրատուրայում երեկոյան ուսուցման ներդրումը տեսադաշտում է եւ քննարկվում է, ուսման վարձերի զեղչման ներկա կարգը վերանայման կարիք ունի, բայց այն, որ առանցքում պետք է մնա բարձր առաջադիմության չափանիշը, անքննարկելի է, համալսարանի բուժկետը կսկսի գործել առաջիկա 2 ամսում:

Եզրափակելով ընդարձակ հանդիպումը՝ Ռուբեն Հայրապետյանը եւս մեկ անգամ կոչ արեց ուսանողներին ներգրավվել համալսարանը բարեփոխելու գործընթացում, հարցերն ու մտահոգությունները ներկայացնել պարզ եւ ուղիղ՝ զերծ մնալով տարատեսակ հարթակներում անհիմն քննարկումներից: «Մենք ձեզ հետ՝ բոլորս միասին, կկարողանանք առաջիկայում արդյունքներ գրանցել: Արդյունքներ գրանցել՝ չի նշանակում, որ բոլոր խնդիրները կլուծվեն, սակայն կլինեն ակնհայտ փոփոխություններ», - ասաց ՀԳՏՀ ղեկավարը:

**ՀԳՏՀ լրատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին**

# Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Յայոց Կաթողիկոսի ցավակցական խոսքը՝ Լուիզ Մանուկյան Սիմոնի վախճանման առիթով

Խորը վշտով տեղեկացանք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հարազատ եւ սիրեցյալ գավակ, ազգային մեծ բարերար, մեր ժողովրդի արժանավոր դուստր **Լուիզ Մանուկյան Սիմոնի** մահվան մասին:

Սրտի մորմոքով սգում ենք մեծանուն հայուհու ցավագին կորուստը, քաղցրությամբ վերհիշում իր աստվածաշնորհ կյանքի ընթացքում ազգասեր ու եկեղեցանվեր ոգով պատկանած լուսեղեն իրագործումները, եկեղեցաշեն ու ազգանվեր գործերի բյուր արդյունքները:

Բարեհիշատակ Լուիզ Մանուկյան Սիմոնը, որպես հայրենասեր եւ եկեղեցանվեր հայուհի, աստվածաշնորհ լույս ու օրհնություն էր ազգային ու եկեղեցական մեր կյանքին: Նա նորովի ցուցաբերեց փառքը Մանուկյան բարերար գերդաստանի՝ հիրավի հանդիսանալով մեր իրականության մեծագույն բարեգործ ու նվիրյալ: Բազում մեծագործություններն ու ազգաշեն իրագործումները Լուիզ Մանուկյան Սիմոնի անունը ոսկեղեն տառերով են արձանագրում հայոց մեծանուն բարերարների, ազգի երախտարժան գավակների պատվավոր ցանկում:

Ակնառու եւ նշանակալի են լուսահոգի Լուիզ Մանուկյան Սիմոնի բարեգործությունները աշխարհասփյուռ մեր ժողովրդի կյանքում եւ հայրենական անդաստանում: Նա երկար տարիներ որպես Յայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ եւ իր ողջ կյանքի ընթացքում անձնապես եւ «Մանուկյան Սիմոն» հիմնադրամի միջոցով արդյունավորեց ազգանվեր ու հայրենանվեր իր առաքելությունը, սր-




